ժպտամ ձեզ: Նայեցե՛ք ինձ, Նարրարոթ, նայեցե՛ք ինձ:
Ահ, դուք շատ լավ գիտեք, փոր պիտի անեք այն ինչ
յես խնդրում եմ ձեզնից: Դուք այդ լավ գիտեք,
այնպես չե՛՞ Նարրարոթ: Յես լավ գիտեմ:

ՅԵՐԵՍԱՍԱՐԴ ՍԻՐԻՅԱՅԻ Նշան և անում յերբոդ զինվորին՝

Դուքս բերեք մարգարեյին... արքայադուստր Սա-
լոմեն ուզում և տեսնել նրան:

ՍԱԼՈՄԵ

Ահ...

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱՅԻ ՄԱՆԿԱՎՈՐԿԸ

Ո, փոքան տարորինակ տեսք ունի լուսինը: Կար-
ծես մեռելի ձեռք և, փոր իրան ծածկելու համար
պատան և փորոնում:

ՅԵՐԵՍԱՍԱՐԴ ՍԻՐԻՅԱՅԻ

Շատ տարորինակ տեսք ունի նա: Կարծես մի
փորրեկ արքայադուստր լինի, փոր սաղափի աչքեր
ունի: Մարմաշ ամպերի միջից ժպտում և նա, փորպես
մի փորրիկ արքայադուստր:

Մարգարեն չբոլորեց դուքս և յեկում: Սալոմեն նայում և նրան
ու հետ բաշվում:

ՅՈՒՔԱՆԱՆ

Ո՞ւր և նա, փորի պղծության բաժակը լցված և

արդեն: Ո՞ւր և նա, փոր արծաթյա զգեստով մեռնելու
յես մի որ ժողովրդի առջև: Ասացեք նրան թող գա,
լսե այն մարդու ձայնը, փոր աղաղակում եր անապա-
տում յեւ արքայական պալատներում:

ՍԱԼՈՄԵ

Ո՞ւմ մասին և խոսում նա:

ՅԵՐԵՍԱՍԱՐԴ ՍԻՐԻՅԱՅԻ

Հայտնի չե, արքայադուստր:

ՅՈՒՔԱՆԱՆ

Ո՞ւր և նա, փոր տեսնելով պատերի վրա մարդ-
կային պատկերներ, քաղեկացիների ներկանկար պատ-
կերները տեսնելով, իր ցանկասեր աչքերին հլու՝
Քաղեկյա դեսպաններ ուղարկեց:

ՍԱԼՈՄԵ

Նա մորս մասին և խոսում:

ՅԵՐԵՍԱՍԱՐԴ ՍԻՐԻՅԱՅԻ

Վո՛չ, արքայադուստր:

ՍԱԼՈՄԵ

Այո՛, մորս մասին և:

ՅՈՒՔԱՆԱՆ

Ո՞ւր և նա, փոր անձնատուր յեղավ ասորեցոց
գորապետներին, փորոնք իրենց մեջքին գոտի յեն

կապում յեվ գլուխներին խույր են կրում: Ո՞ւր և նա.
վոր անձնատուր եր լինում յեզիպտացի պատանի-
ներին, վորոնք կտավ են հագնում յեվ ծիրանի ու
վոսկի վահաններ ու արծաթյա սաղավարդներ են կրում
յեվ վորոնք հաղթանդամ են: Ասացեք նրան, թող վեր
յեղեն իր պազշոտության մահնից, վորպիպի լսե այն
մարդուն, վոր Տիրոջ հանապարհն և պատրաստում:
Ասացեք, թող զոջա: Յեվ յեթե նա չի զոջա յեվ կմնա
իր զարշագործության մեջ, ասացեք նրան թող գա,
վորովհետև Տերը վերցրել և արդեն իր խարազանը:

ՍԱԼՈՄԵ

Բայց նա սոսկալի՜ յե, սոսկալի՜...

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԻՐԻՅԱՅԻ

Այստեղ մի՛ մնաք, արքայադուստր, խնդրում եմ ձեզ:

ՍԱԼՈՄԵ

Ամենից սարսափելին նրա աչքերն են: Կարծես
Տիրոջան գորգի վրա ջահերի կրակով բացված խորշեր
լինեն: Կարծես սեվ քարանձավներ են, ուր վիշապներն
են ննջում, Յեզիպտոսի սեվ քարանձավները, ուր
վիշապներն են ապաստանում: Կարծես սեվ լճեր լինեն
ցնորական լուսիններով մրրկված: Ինչպե՞ս եր կարծում
նա նորից պիտի խոսի՜...

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԻՐԻՅԱՅԻ

Այստեղ մի՛ մնաք, արքայադուստր, յեա ձեզ խնդ-
րում եմ, մի՛ մնաք այստեղ:

ՍԱԼՈՄԵ

Վորքան վտիտ և նա: Կարծես մի նրբագին փղոս-
կըրյա պատկեր լինի: Կարծես արծաթյա մի պատկեր և:
Յեա հավատացած եմ, վոր նա նույնքան վողջախոհ և
վորքան յեվ լուսինը: Կարծես՝ արծաթյա մի նառա-
գայթ և նա: Նրա մարմինը շատ սառն և, ինչպես
փղոսկր: Յեա մոտիկից եմ ուզում նայել նրան:

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԻՐԻՅԱՅԻ

Վո՛չ, վո՛չ, արքայադուստր:

ՍԱԼՈՄԵ

Յեա մոտիկից պիտի նայեմ նրան:

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԻՐԻՅԱՅԻ

Արքայադուստր, արքայադուստր:

ՅՈՒՔԱՆԱՆ

Ո՞վ և այդ կինը, վեր նայում և ինձ: Յեա չեմ
ուզում վոր նա ինձ նայե: Ինչո՞ւ յե նայում ինձ իր
վոսկեղեն աչքերով, վոսկեներկ թերթիչների տակից:
Յեա չգիտեմ, ո՞վ և նա: Յեա այդ չեմ ուզում իմանալ:
Ասացեք նրան՝ թող հեռանա: Նրա հետ չե, վոր յեա
ուզում եմ խոսել:

ՍԱԼՈՄԵ

Յեա Սալոմեն եմ, Հերովդիյադայի դուստրը, արքա-
յադուստրը Հրկյաստանի:

ՅՈՒՔԱՆԱՆ

Հեռացի՛ր, դուստր Բաբելոնի: Մի մոտենա Տիրոջ

ընտրյալին: Քո մայրն իր պղծության զինկով լցրեց
յերկիրը յեւ նրա մեղքերի աղաղակն Աստուծո ական-
ջին հասաւ:

ՍԱՆՈՄԵ

Նորից խոսիր, Յորանաան, բո ձայնն արբեցնում
ե ինձ:

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԻՐԻՅԱՅԻ

Արքայադուտոր, արքայադուտոր, արքայադուտոր:

ՍԱՆՈՄԵ

Նորից խոսիր, խոսիր նորից, Յորանաան յեւ ասա
ի՞նչ պիտի անեմ յես:

ՅՈՒՔԱՆԱԱՆ

Ինձ մի՛ մերձենար, դուստր Սողոմոն, այլ սեւ թողով
ծածկեցեք ձեր յերեսը, մոխիր ցանեցեք ձեր գլխին
յեւ զնացեք անապատ Մարդո Վորդուն փորոնելու:

ՍԱՆՈՄԵ

Ո՞վ ե նա՝ Մարդո Վորդին: Արդյոք նա յեւս
նույնքան զեղեցիկ ե, փորքան դո՛ւ, Յորանաան:

ՅՈՒՔԱՆԱԱՆ

Հեռացիր, հեռացիր... Յես լսում եմ, ինչպես
պալատում մահվան հրեշտակի թևներն են թափա-
հարում:

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԻՐԻՅԱՅԻ

Արքայադուտոր, աղաչում եմ ձեզ, վերադարձե՛ք:

ՅՈՒՔԱՆԱԱՆ

Հրեշտակ Աստուծո, ի՞նչ ես փորոնում այստեղ,

դաշույնը ձեռքիդ, ո՞ւմ ես փորոնում այս անբարիշտ
պալատում: Դեռ չի հասել այն մարդու որը, փոր
արծաթե հագուստով պիտի մեռնի:

ՍԱՆՈՄԵ

Յորանաան:

ՅՈՒՔԱՆԱԱՆ

Ո՞վ ե խոսում:

ՍԱՆՈՄԵ

Յորանաան, ես սիրահարված եմ բո մարմնի վրա:
Քո մարմինն սպիտակ ե, փորպես արոտի շուշանը,
փորին հնձվորը դեռ չի դիպել: Քո մարմինն սպիտակ
ե, փորպես սարերում պառկած ծյունը, փորպես ծյունը,
փոր պառկած ե Հրեյաստանի սարերում յեւ դեպի
հովիտը չի իջնում: Վարդերն Արաբիայի թագուհու
այգում այնպես սպիտակ չեն, ինչպես քո մարմինը:
Վո՛չ վարդերն Արաբիայի թագուհու այգում, փո՛չ
արշալույսի քայլերը, փոր դողդողում են տերեւների
վրա, փո՛չ լուսնի լանջը, յերբ նա հանգչում ե ծովի
լանջին: Չկա՝ աշխարհում փոչ մի բան, փոր այնպես
սպիտակ լինի, ինչպես քո մարմինը: Թույլ տուր
դիպեմ քո մարմնին:

ՅՈՒՔԱՆԱԱՆ

Հեռացիր, դուստր Բաբելոնի: Կնոջ միջոցով ե,
փոր չարն աշխարհ ե մտել: Հետս մի՛ խոսեք: Յես
չեմ ուզում քեզ լսել: Յես փոչ փոքի չեմ լսում, բացի
Աստծուց:

ՍԱՆՈՄԵ

Քո մարմինը զգվելի՛ յե: Նա բորոտի մարմնի յե

Նման: Նա նման է սպիտակեցրած պատի, վորի վրա իժեր են սողում, վորի վրա կարիճներ են բռն դրել: Նա նման է սպիտակեցրած մի դագաղի, վոր զազրելի բաներով է լցված: Սարսափելի չե, սարսափելի չե քո մարմինը: Յես քո մազերի վրա եմ սիրահարված: Յորանաան: Քո մազերը՝ նման խաղողի փղկույզներին, սեւ խաղողի փղկույզներին, վոր կախվում են յեղեմի վազերից, յեղեմականների յերկրում: Քո մազերը՝ փոքր եւ իրանանու յեղեմին, փոքր եւ իրանանու հակա յեղեմին, վոր ստվեր եւ տախտակներին յեւ ավազակներին, վորոնք ուզում են ցերեկով թագնված մնալ: Այն յերկար ու սեւ գիշերները, գիշերները, յերբ լուսինը դուրս չի գալիս, յերբ աստղերը յերկջուտ են, այդպես սեւ չեն: Էռութունը, վոր ննջում եւ անտառներում, այդպես սեւ չե: Չկա՝ աշխարհում փշինչ, վոր այնպես սեւ լինի ինչպես քո մազերը: Թույլ տուր դիպչեմ քո մազերին:

ՅՈՒՐԱՆԱՆ

Հեռացի՛ր, Սողոմի դուստր: Ըի՛ դիպչի՛ր ինձ: Չպետք եւ պղծել Տիրոջ տաճարը:

ՍԱԼՈՄԵ

Դարշելի՛ յեն քո մազերը: Յեխով ու փոշով են պատած նրանք: Կարծես փշյա պսակ եւ, վոր դրել են քո ճակտին: Կարծես սեւ ոճերի մի կծիկ եւ, վոր զալարվում եւ քո վզի շուրջը: Յես չեմ սիրում քո մազերը: Քո բերանն եւ վոր սիրում եմ յես Յորանաան: Քո բերանը նման եւ շիկակարմիր գոտու փղոսկրյա աշտարակի վրա: Նա նման եւ Նուան, վոր կխախտ եւ փղոսկրյա դանակով: Նուան ծաղիկները,

վոր բացվում են Տիրուսում յեւ ավելի կարմիր, բան վարդերը: Փողերի կարմիր ճիւղ, վոր թագավորների գալուստն եւ ավետում, վոր ահ ու սարսափ եւ ներշնչում թշնամիներին — այդքան կարմիր չե: Քո բերանն ավելի կարմիր եւ բան այն մարդկանց փոքերը, վորոնք խաղող են կոխում հնձաններում: Քո բերանն ավելի կարմիր եւ, բան վառներն այն աղաւթներին, վորոնք տաճարներում են ապրում յեւ վորոնց քրմորն են կերակրում: Քո բերանն ավելի կարմիր եւ, բան փոռներն այն մարդու, վոր անտառից եւ վերադառնում, ուր առյուծ եւ սպանել յեւ փոսկեփայլ վազեր տեսել: Քո բերանը նման եւ մարջանի ճյուղի, վոր ձկնորսները գտնում են ծովի խավարում յեւ պահում են թագավորների համար: Նա նման եւ կարմրատեղի, վոր Մոաբիցայները գտնում են Մոաբիցայի հանքերում յեւ վորը խլում են նրանցից թագավորները: Քո բերանը՝ փոքր աղեղը պարսից թագավորի, վոր կարմրաափով եւ ներկված յեւ վորի ծայրերը մարջան են: Չկա աշխարհում փշինչ, վոր այնպես կարմիր լինի ինչպես քո բերանը: Թույլ տուր համբուրեմ քո բերանը:

ՅՈՒՐԱՆԱՆ

Յերբե՛ր, դուստր Բարեկոնի: Սողոմի դուստր՝ յերբե՛ր:

ՍԱԼՈՄԵ

Յես կհամբուրեմ քո բերանը, Յորանաան: Յես կհամբուրեմ քո բերանը:

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԻՐԻՅԱՅԻ

Արքայադուստր, արքայադուստր, դու, վոր նման

ես մրտի հասմիկին, դու աղաձայակների աղաձայակ,
այդ մարդուն մի՛ նայիր, մի՛ նայիր դրան: Այդպիսի
բաներ մի՛ ասիր նրան: Յես այդ չեմ կարող տանել...
Արքայադուտոր, արքայադուտոր, մի՛ ասիր այդպիսի
բաներ:

ՍԱՆՈՄԵ

Յես կհամբուրեմ քո բերանը, Յոբանաան:

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԻՐԻՅԱՅԻ

Ա՜հ...

Սորանում ե ինքն իրան յեվ ընկնում Սալոմեյի յեվ Յոբանաանի մեջտեղը

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱՅԻ ՄԱՆԿԱՎԻԴԻ

Յերիտասարդ սիրիյացին ինքնասպան յեղավ: Յերի-
տասարդ հրամանատարն սպանեց իրան: Ինքն իրան
սպանեց նա, վոր իմ ընկերն եր: Յես նրան նվիրել էյի
մի տիկի՝ լի անուշահոտ ջրով յեվ արծաթյա ողեր:
Յեվ ահա նա սպանված ե: Ա՜հ, միթե նա չե՞ր գուշա-
կում, վոր դժբախտություն պիտի պատահի: Յես ինքս
գուշակեցի յեվ ահա յեկավ դժբախտությունը: Յես
լավ զգիտեյի վոր լուսինը մեռել ե վորոնում, բայց
չգիտեյի վոր սրան եր վորոնում լուսնյակը: Ա՜հ, ինչո՞ւ
յես լուսնից չթագցրի նրան: Յեթե թագցնեյի քարան-
ծավում, լուսինը նրան չեր տեսնի:

ԱՌԱՋԻՆ ՁԻՆՎՈՐ

Արքայադուտոր, ահա յերիտասարդ հրամանատարն
ինքն իրան սպանեց:

ՍԱՆՈՄԵ

Թույլ տուր համբուրեմ քո բերանը Յոբանաան:

ՅՈՒՐԱՆԱՆ

Միթե ահ չունեք դուք, դուտոր Հերովդիյադայի:
Միթե չասացի յես ձեզ, վոր լսում եմ, ինչպես պալա-
տում մահվան հրեշտակն իր թեպերն ե թափահարում:
Յեվ այդ հրեշտակը՝ միթե նա չի յեկել արդեն:

ՍԱՆՈՄԵ

Թույլ տուր համբուրեմ քո բերանը:

ՅՈՒՐԱՆԱՆ

Դուտոր շնության, կա միայն մի մարդ, վոր
կարող ե քեզ փրկել: Դա այն Մարդն ե, վորի մասին
ասացի քեզ: Դնացե՛ք, վորոնեցեք նրան: Այժմ նա
Դավիթյական ծովի վրա յե յեվ նավակում քարոզում ե
իր աշակերտներին: Ծունկ չոքեցեք ծովափին յեվ նրա
անունը տվեք ու խնդրեցեք: Յեվ յերբ ձեզ մոտ գա,
վորովհետեվ նա գնում ե ամենքի մոտ, ով կանչում ե,
նրա վորտներն ընկեք յեվ ձեր մեղքերին թողություն
խնդրեցեք:

ՍԱՆՈՄԵ

Թույլ տուր համբուրեմ քո բերանը:

ՅՈՒՐԱՆԱՆ

Անե՛ձք քեզ, արյունախառնություն մոր
դուտոր, անե՛ձք քեզ:

ՍԱՆՈՄԵ

Յես կհամբուրեմ քո բերանը, Յոբանաան:

ՅՈՒՐԱՆԱՆ

Յես քեզ չեմ ուզում նայել: Յես չեմ նայի քեզ:
Դու անիծված ես, Սալոմե, դու անիծված ես:

Ի՞նչում ե ջրորը:

ՈԱԼՈՐԴ

Յեա կհամբուրեմ քո բերանը, Յորանաան, յեա կհամբուրեմ քո բերանը:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ

Դիյակը պետք է տանել մի ուրիշ տեղ: Տետրաբըր դիյակ տեսնել չի սիրում. բացի իր սպանած մարդկանց դիյակներից:

ՀԵՐՈՎԴԻՅԱՆՈՅԻ ՄԱՆԿԱՎԻԿԸ

Նա իմ յեղբայրն էր: Ավելի մտերիմ էր, քան մի յեղբայր: Յեա նրան մի փորրիկ տուփ էլի տվել՝ անուշահոտ ջրով լի յեվ մի արծաթյա մատանի, վոր նա միշտ կրում էր մատին: Յերեկոները մենք շրջում էյինք գետի ափին յեվ նշենիների տակ, ուր Նա պատմում էր ինձ իր հայրենիքի մասին: Նա միշտ ցածր ձայնով էր խոսում: Նրա ձայնի հնչյունը սրնգահարի սրինգի ձայնին էր նման: Նա շատ էր սիրում գետի մեջ ինքն իրան նայել: Այդ բանի համար յեա նախատում էյի նրան:

ՅԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ

Դուք իրավացի չեք: Դիյակը պետք է թազցնել: Պետք չե, վոր տետրաբըր տեսնի այն:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ

Տետրաբըն այստեղ չի գա: Նա յիրեք պատշգամբ չի դալիս: Նա մարգարեյից շատ է վախենում:

Մտնում են Հերովը, Հերովիլյադան յեվ ամբողջ արքունիքը:

ՀԵՐՈՎԴ

Վորտե՞ղ և Սալումեն. Վորտե՞ղ և արքայադուստրը:

Ինչո՞ւ նա չվերադարձավ հանդիսարանը յերբ յեա հրամայեցի: Ահ, ահա նա:

ՀԵՐՈՎԴԻՅԱՆՈՅԻ

Զպետք է նայել նրան: Դուք անդադար նրան եր նայում:

ՀԵՐՈՎԴ

Այս յերեկո լուսինը շատ տարորինակ տեսք ունի: Այնպես չե՞, շատ արտասովոր տեսք ունի լուսինը: Կարծես հիստերիկ կին է, հիստերիկ մի կին, վոր շրջում է յեվ ամեն տեղ սիրեկաններ վորոնում: Բացի այդ նա մերկ է: Բոլորովին մարկ է նա: Ամպերն ուզում են ծածկել նրան, բայց նա չի կամենում: Նա թափառում է ամպերի մեջ, վորպես հարբած մի կին: Յեա հաստատ գիտեմ, վոր նա սիրեկան է վորոնում: Այնպես չե՞ նա թափառում է, վորպես հարբած կին: Նա հիստերիկ կնոջ է նման, այնպես չե՞:

ՀԵՐՈՎԴԻՅԱՆՈՅԻ

Վոչ: Լուսինը լուսնի է նման, յեվ ուրիշ վրչինչ: Վերադառնանք: Դուք անելիք չունեք այստեղ:

ՀԵՐՈՎԴ

Յեա կմնամ: Մանասն, փռեցեք այստեղ գորգերը: Վառեցե՛ք ջահերը: Բերե՛ք փղոսկրյա սեղաններն ու հասալյա սեղանները: Ողբ հրաշալի յե այստեղ: Յեա նորից պիտի գինի խմեմ իմ հյուրերի հետ: Պետք է ամեն կերպ պատվել կեսարի դեսպաններին:

ՀԵՐՈՎԴԻՅԱՆՈՅԻ

Նրանց պատճառով չե, վոր դուք մնում եք այստեղ:

ՀԵՐՈՎԴ

Այո՛, ողբ հրաշալի յն։ Յեկ, Հերովդիադա, մեր հյուրերը մեզ են սպասում։ Ահ, յես սայթաքեցի։ Յես արյան մեջ սայթաքեցի։ Սա վատ նշան է։ Սա շատ վատ նշան է։ Ի՞նչ արյուն է այս։ Յեվ այս դիպակը։ Ի՞նչ բան ունի այստեղ դիպակը։ Մի՞թե դուք կարծում եք, վոր յես նման եմ յեգիպտական թագավորին, վոր վոչ մի խնճույք չի տալիս առանց հյուրերին մի դիպակ ցույց տալու։ Վերջապես ո՞վ է սա։ Յես չեմ ուզում նայել սրան։

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ

Դա մեր հրամանատարն է, արքա։ Դա յերիտասարդ սիրիյացին է, վորին դեռ յերեք որ սրանից առաջ դուք մեր վրա հրամանատար կարգեցիք։

ՀԵՐՈՎԴ

Յես չեմ հրամայել վոր սպանեն նրան։

ՅԵՐԿՐԹՐԴ ԶԻՆՎՈՐ

Նա ինքնասպան յեղավ, Տեր։

ՀԵՐՈՎԴ

Ինչո՞ւ։ Զե՞ վոր յես նրան հրամանատար կարգեցի։

ՅԵՐԿՐԹՐԴ ԶԻՆՎՈՐ

Մենք չգիտենք, Տեր։ Սակայն նա ինքն սպանեց իրան։

ՀԵՐՈՎԴ

Այդ ինձ տարորինակ է թվում։ Յես կարծում եմ թե միայն հոռմեյացի փիլիսոփաներն են ինքնասպա-

նություն գործում։ Այնպես չե՞ Տիգելին, Հռոմում փիլիսոփաներն իրանք իրանց սպանում են։

ՏԻԳԵԼԻՆ

Կան այդպիսիները, Տեր, վորոնք իրանց սպանում են։ Այո՛, ստոյիկյաններն են։ Նրանք շատ կոպիտ մարդիկ են։ Վերջապես նրանք շատ ծիծաղելի մարդիկ են։ Ինձ թվում է, վոր շատ ծիծաղելի յեն նրանք։

ՀԵՐՈՎԴ

Ինձ ել այդպես է թվում։ Ինքն իրան սպանելը՝ ծիծաղելի բան է։

ՏԻԳԵԼԻՆ

Հռոմում նրանց շատ են ծաղրում։ Կայսրը նրանց մասին մի յերգիծական պոյեմ է գրել։ Ամեն տեղ կրկնում են այն։

ՀԵՐՈՎԴ

Ահ, նա յերգիծական պոյեմ է գրել նրանց մասին։ Կեսարը զարմանալի յե։ Նա ամեն ինչ կարող է անել։ Տարորինակ է վոր ինքնասպան է յեղել յերիտասարդ սիրիյացին։ Յես նրան ափսոսում եմ։ Այո՛, յես շատ եմ ափսոսում։ Վորովհետեւ նա գեղեցիկ եր։ Նույն իսկ շատ եր գեղեցիկ։ Նա շատ նվազուն աչքեր ուներ։ Յես հիշում եմ, տեսել եմ նրան այդպիսի նվազուն աչքերով Սալոմեյին նայելիս։ Ժիշտ, ինձ թվաց վոր նա Սալոմեյին շատ եր նայում։

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Կան յեվ ուրիշները, վոր Սալոմեյին շատ են նայում։

ՀԵՐՈՎԴ

Նրա հայրը թագավոր էր: Յես նրան արտաքսեցի իր թագավորութունից: Յեզ նրա մորը, փոր թագուհի յեր. դուք ստրուկուհի դարձրիք, Հերովդիյադա: Այդ պիսով նա այստեղ հյուրի պես էր: Յեզ դրա համար յես նրան հրամանատար նշանակեցի: Յես ափսոսում եմ. փոր նա մեռել է: Սակայն ինչո՞ւ յեր դիպակն այստեղ թողել: Պետք է տանել այստեղից: Յես չեմ ուզում տեսնել: Տարեր դիպակը:

Դիպակը տանում են:

Այստեղ ցուրտ է: Այստեղ բամի յես: Այնպես չե՞, այստեղ բամի յես:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Բոլորովին փոչ: Այստեղ բամի չկա:

ՀԵՐՈՎԴ

Վոչ. այստեղ բամի յես: Յեզ յես զգում եմ ոգում թեզերի թափահարումի նման մի բան: Հսկայական թեզերի թափահարումի նման մի բան: Դուք չե՞ք լսում:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Յես փոչինչ չեմ լսում:

ՀԵՐՈՎԴ

Յես ել այնպես չեմ լսում: Բայց լսում եյի: Անշուշտ, դա բամի յեր: Անցավ: Բայց փոչ, յես նորից եմ լսում: Դուք չե՞ք լսում: Դա ի՞նչ յեզ ի՞նչ թեզերի թափահարումի յես նման:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Յես ձեզ ասում եմ, փոր փոչինչ չկա: Դուք հիվանդ եք: Վերադառնա՛նք:

ՀԵՐՈՎԴ

Յես հիվանդ չեմ: Ձեր գուստրն ե հիվանդ: Նա շատ հիվանդոտ տեսք ունի, ձեր գուստրը: Յես նրան յերեր չեմ տեսել այդքան գունատ:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Յես ձեզ ասացի, փոր նրան չնայեք:

ՀԵՐՈՎԴ

Դինի լցրեր:

Դինի յես բերում:

Սալումն, յեկէ՛ք այստեղ, մի քիչ գինի խմեցեք հետո. յես ազնիվ գինի ունեմ: Ինքը կեսարն ե ուղարկել այդ գինին: Թրջեցեք նրանով ձեր մանրիկ կարմիր շրթունքները, իսկ հետո յես կը գառարկեմ բաժակը:

ԱԼԼՈՐԵ

Յես ծարավ չեմ տեսրարք:

ՀԵՐՈՎԴ

Դուք լսում եք, ինչպե՞ս ե պատասխանում ինձ նա. ձեր գուստրը:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Յես կարծում եմ փոր նա շատ իրավացի յես: Ինչո՞ւ դուք շարունակ նրան եք նայում:

ՀԵՐՈՎԴ

Միրգ բերեր:

Միրգ են բերում:

Սալումն՝, յեկեր հետս միրգ կերեր: Յես շատ եմ սիրում տեսնել մրգի վրա քո մանրիկ ատամների հետքերը: Մի փոքրիկ կտոր կծեցիք այս պտուղից յեմ մնացյալը կուտեմ յես:

ՍԱՆՈՄԵ

Յես քաղցած չեմ, տետրաք:

ՀԵՐՈՎԴ Հերովդիսային:

Ահա թե ինչպես եր դաստիարակել դուք նրան, ձեր դստերը:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Իմ դուստրն ու ~~յես~~ արքայական ծագում ունենք: Մինչդեռ դո՛ւ—, քո պապը ուղտարած ե յեղել: Բացի այդ նա յեմ ամազակ ե յեղել:

ՀԵՐՈՎԴ

Դու սո՛ւտ ես ասում:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Դու շատ լավ գիտես, փոր այդ ճշմարիտ ե:

ՀԵՐՈՎԴ

Սալումն՝, յեկ նստիր կողքիս: Յես բեզ կտամ քո մոր գահը:

ՍԱՆՈՄԵ

Յես հոգնած չեմ, տետրաք:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Դուք լա՞վ եք տեսնում թե ինչ կարծիք ունի նա ձեր մասին:

ՀԵՐՈՎԴ

Բերե՛ք... Ի՞նչ ելի ուզում յես: Չգիտեմ: Մե՛հ մտա- բերեցի:

ՅՈՒՔԱՆԱՆԻ ՉԱՅՆԸ

Հասել ե ժամանակը: Այն, ինչ յես գուշակել ելի, կատարվեց, ասում ե Աստ[ած]: Հասա՛լ այն որը, փորի մասին խոսում ելի յես:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Լռեցրե՛ք դրան: Յես նրա ծայնը չեմ ուզում լսել: Այդ մարդն անդադար հայցոյանք ե թափում իմ վրա:

ՀԵՐՈՎԴ

Նա ձեր մասին փոչինչ չի ասում: Բացի դրանից, նա շատ մեծ մարգարե յե:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Մարգարեներին յես չեմ հավատում: Մի՞թե մարդ կարող ե գուշակել թե ի՞նչ պիտի պատահի: Այդ փոչ փոք չգիտե: Բացի դրանից նա միշտ վիրավորում ե ինձ: Բայց ինձ թվո՛ւմ ե, փոր դուք վախենում եք նրանից... Այո՛, յես լավ գիտեմ, փոր դուք նրանից վախենում եք:

ՀԵՐՈՎԴ

Յես նրանից չեմ վախենում: Յես փոչ փոքից չեմ վախենում:

ՀԵՐՈՂԴԻՅԱԴԱՆ

Այո՛, դուք նրանից վախենում եք: Յեթե չեք վախենում ապա ինչու նրան հրեյաներին չաղիք, չե՞ վոր նրանք վեց ամիս ե պահանջում են նրան:

ՀՐԵՅԱ

Իրոք արքա, ավելի լավ կլիներ, յեթե մեզ տալիք նրան:

ՀԵՐՈՂԴ

Բավ ե այդ մասին: Յեա արդեն ծեղ տվել եմ իմ պատասխանը: Յեա նրան չեմ ուզում տալ: Դա մի մարդ ե, վոր տեսել ե Աստծուն:

ՀՐԵՅԱ

Այդ, այդ անկարելի յե: Յեղիյա մարգարեյից հետո վոչ վոր Աստծուն չի տեսել: Յեղիյա մարգարեն վերջինն ե յեղև վոր տեսել ե Աստծուն: Մեր ժամանակները Աստված մարդկանց չի յերեւում: Նա թազուն ե պահում իրան: Յեւ դրա համար ե, վոր յերկերը լի յանբախտություններով:

ՄԻ ԱՅՆ ՀՐԵՅԱ

Վերջապես հայտնի չե՛ իրոք տեսել ե Յեղիյան Աստծուն, թե վոչ: Ավելի հիշտ՝ նա Աստծու ստվերն ե միշտյն տեսել:

ՅԵՐՐՈՐԴ ՀՐԵՅԱ

Աստված իրան յերբեք չի թագցնում: Նա իրան ցոյց ե տալիս միշտ յեւ ամեն բանում: Աստված նույնպես յեւ չարի մեջ ե, ինչպես բարու մեջ:

ՁՈՐՐՈՐԴ ՀՐԵՅԱ

Այդպես չպետք ե ասել: Դա շատ վտանգավոր միտք ե: Դա մի միտք ե, վոր Աղեքսանդրիական դպրոցներից ե յեկել, վորտեղ հունական փիլիսոփայություն են սովորեցնում: Իսկ հույները կռապաշտ են: Հույները մինչեւ իսկ թրպատված ել չեն:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀՐԵՅԱ

Յերբեք չի կարելի իմանալ թե ինչպես ե վարվում Աստված: Խորհրդավոր են նրա ուղիները: Կարող ե պատահել, վոր այն, ինչ մենք չարիք ենք անվանում՝ բարիք ե, իսկ այն, ինչ մենք բարիք ենք անվանում՝ չարիք ե: Վոչինչ չի կարելի իմանալ: Հարկավոր ե լոկ հնազանդվել ամեն բանի: Աստված շատ ե զորավոր: Նա միշտ ժամանակ հարվածում ե յեւ թույլերին, յեւ ուժեղներին: Նա վոչ վորի առաջիկություն չի տալիս:

ԱՌԱՋԻՆ ՀՐԵՅԱ

Այդ հիշտ ե: Սարսափելի յե Աստված: Նա վերում ե յեւ թույլերին յեւ ուժեղներին, ինչպես ցորենն են վիշրում սանդի մեջ: Բայց այդ մարդը Աստծուն յերբեք չի տեսել: Յեղիյա մարգարեյից հետո վոչ վոր չի տեսել Աստծուն:

ՀԵՐՈՂԴԻՅԱԴԱՆ

Լոեցրե՛ք դրանց: Դրանք ինձ ծանօթացնում են:

ՀԵՐՈՂԴ

Բայց յեա լսել եմ, վոր Յոքանատան ինքն ե Յեղիյա մարգարեն:

ՀՐԵՑԱ

Այդ անկարելի յե: Յեղիյա մարգարեյից հետո
յերեքհարյուր տարուց ավել ե անցել:

ՀԵՐՈՎԴ

Կան այնպիսիները, վոր ասում են թե դա Յեղիյա
մարգարենն ե:

ՆԱԶՈՎՐԵՅԻ

Յեա համոզված եմ, վոր դա Յեղիյա մարգարենն ե:

ՀՐԵՑԱ

Վո՛չ, վո՛չ, դա Յեղիյա մարգարենն չե:

ՅՈՒՔԱՆԱՆԻ ԶԱՅՆԸ

Հասել ե որը, հասել ե Տիրոջ որը յեւ յես լսում եմ
նրա քայլերը լեռների վրա, Նբա՛, ով աշխարհի Փրկիչը
պիտի լինի:

ՀԵՐՈՎԴ

Դրանով ի՞նչ ե ուզում ասել: Աշխարհի Փրկի՞չ:

ՏԻԳԵԼԻՆ

Դա կեսարի տիտղոսներից մեկն ե:

ՀԵՐՈՎԴ

Բայց կեսարը Հրեյաստան չի գալու: Յեա յերեկ
Հոռմից նամակ ստացա: Ինծ քան չեյին գրել այդ
մասին: Վերջապես դուք, Տիգելին, ծմեռը Հոռմ եք
յեղել, վոչինչ չե՞ք լսել այդ մասին:

ՏԻԳԵԼԻՆ

Ճշմարիտ վոր, արքա, յես այդ մասին քան չեմ
լսել: Յեա միշտյն տիտղոսն եյի բացատրում: Դա կեսարի
տիտղոսներից մեկն ե:

ՀԵՐՈՎԴ

Կեսարը չի կարող գալ, նա վոտացավ ունի: Ասում
են, վոր նրա վոտները վոյի վոտների նման են: Բացի
այդ կան յեւ պետական նկատումներ: Ով հեռանում ե
Հոռմից՝ կորցնում ե Հոռմը: Նա չի գա: Վերջապես
կեսարը տեր ե: Յեթե կամենա՛ կարող ե յեւ գալ:
Սակայն յես չեմ կարծում, վոր նա գա:

ԱՌԱՋԻՆ ՆԱԶՈՎՐԵՅԻ

Մարգարեյի խոսքը կեսարի մասին չեր, արքա՛:

ՀԵՐՈՎԴ

Կեսարի մասին չե՞ր:

ԱՌԱՋԻՆ ՆԱԶՈՎՐԵՅԻ

Վոչ, արքա:

ՀԵՐՈՎԴ

Հապա ո՞ւմ մասին եր խոսում նա:

ԱՌԱՋԻՆ ՆԱԶՈՎՐԵՅԻ

Մեսսիայի՛ վորը յեկել ե:

ՀՐԵՑԱ

Մեսսիյան չի յեկել:

ԱՌԱՋԻՆ ՆԱԶՈՎՐԵՅԻ

Նա յեկել ե յեւ տմեն տեղ հրաշքներ ե գործում:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Վճհ, վոհ, հրաշքներ: Յես հրաշքների չեմ հաւա-
տում: Յես այդ շատ եմ տեսել:

Մանկավիճիկն:

Իմ հովհարը:

ԱՌԱՋԻՆ ՆԱԶՈՎՐԵՅԻ

Այդ մարդն իսկական հրաշքներ և գործում:
Այդպես, մի հարսանիքում, վոր տեղի ուներ Գալիլիայի
մի փոքրիկ քաղաքում, մի բալական նշանավոր քաղա-
քում, նա ջուրը՝ գինի դարձրեց: Այդ պատմել են ինձ
մարդիկ, վոր այնտեղ ներկա յեն յեղել: Նմանապես,
նա բժշկել և յերկու բորոտների վոր նստած են յեղել.
Կափառնաումի դարբասի առջև, բժշկել և միջայն իր
ծեռքը նրանց վրա դնելով:

ՅԵՐԿՐՈՐԴ ՆԱԶՈՎՐԵՅԻ

Վոչ, Կափառնաում նա յերկու կույր և բժշկել:

ԱՌԱՋԻՆ ՆԱԶՈՎՐԵՅԻ

Վոչ, բորոտ են յեղել այդ յերկուսը: Բայց նա
կույրեր ել և բժշկել: Նրան տեսել են մի սարի վրա
հրեշտակների հետ խոսելիս:

ՍԱԳՈՒԿԵՅԻ

Հրեշտակ չկա:

ՓԱՐԻՍԵՅԻ

Հրեշտակներ կան, բայց յես չեմ հաւատում, վոր
այդ մարդը խոսած լինի նրանց հետ:

ԱՌԱՋԻՆ ՆԱԶՈՎՐԵՅԻ

Անցորդների մի բազմութիւն տեսել և նրան հրեշ-
տակների հետ խոսելիս:

ՍԱԳՈՒԿԵՅԻ

Վոչ հրեշտակներ:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Ինձ նեղացնում են սրանք: Սրանք հիմար են:
Բոլորովին հիմար են սրանք:

Մանկավիճիկն:

Դեհ, լալ, իմ հովհարը:

Մանկավիճիկը ապիւս և հովհարը:

Դուք յերազկոտ տեսք ունեք: Պետք չե՛ յերազել:
Յերազողները հիվանդներ են:

Հովհարով խիտ և մանկավիճիկն:

ՅԵՐԿՐՈՐԴ ՆԱԶՈՎՐԵՅԻ

Նմանապես Յայրոսի դստեր հրաշքը:

ԱՌԱՋԻՆ ՆԱԶՈՎՐԵՅԻ

Այո՛, այո՛, այդ կատարելապես հաստատ բան ե՛:
Այդ անկարելի՛ յն ժխտել:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Այս մարդիկ խենթացել են: Լուսնին շատ են նայել
սրանք: Ասացե՛ք թող լուն:

ՀԵՐՈՎԴ

Ի՞նչ բան և այդ Յայրոսի դստեր հրաշքը:

ԱՌԱՋԻՆ ՆԱԶՈՎՐԵՑԻ

Յայրոսի դուստրը մեռել էր յեւ նա հարություն տվեց նրան:

ՀԵՐՈՎԴ

Նա մեռելներին հարություն և տալիս:

ԱՌԱՋԻՆ ՆԱԶՈՎՐԵՑԻ

Այո՛, արքա, նա մեռելներին հարություն և տալիս:

ՀԵՐՈՎԴ

Յես չեմ ուզում վոր նա այդ բանն անն: Յես այդ արգելում եմ նրան: Յես չեմ թույլատրում մեռելներին հարություն տալու: Պետք և գտնել այդ մարդուն յեւ ասել, վոր յես արգելում եմ մեռելներին հարություն տալը: Այժմ վորտե՛ղ և նա, այդ մարդը:

ՅԵՐԿՐՈՐԴ ՆԱԶՈՎՐԵՑԻ

Ամեն տեղ, արքա, բայց շատ դժ-վար և գտնել նրան:

ԱՌԱՋԻՆ ՆԱԶՈՎՐԵՑԻ

Ասում են, վոր նա այժմ Սամարիյա յի:

ՀՐԵՑԱ

Ուրեմն նա մեասիյան չե, թե վոր Սամարիյա յի: Սամարացիների մոտ չե, վոր պիտի գա մեասիյան: Սամարացիները նզոված են: Նրանք յերբեք տահար-ներում զո՛հ չեն բերում Աստծուն:

ՅԵՐԿՐՈՐԴ ՆԱԶՈՎՐԵՑԻ

Մի բանի որ և, վոր նա հեռացել և Սամարիյայից: Կարծեմ այժմ նա Յերուսաղիմի շրջակայքում և:

ԱՌԱՋԻՆ ՆԱԶՈՎՐԵՑԻ

Վո՛չ, վո՛չ, նա այնտեղ չե: Յես Յերուսաղիմից նոր եմ յեկել: Ահա յերկու ամիս և նրա մասին բան չի լսվում:

ՀԵՐՈՎԴ

Դա միյեմույն և: Այնուամենայնիվ պետք և գտնել նրան յեւ իմ կողմից ասել, վոր չեմ թույլատրում մեռելներին հարություն տալու: Զուրը գինի դարձնել, բժշկել բորոտներին, կույրերին... այդ ամենը նա կարող և անել, յեթե կամենում և: Դրանց դեմ ասելիք չունեմ: Մինչեւ իսկ ինձ թվում և, վոր բորոտներին բժշկելը բարի գործ և: Բայց յես չեմ թույլատրում մեռելներին հարություն տալու: Սարսափելի կլիներ յեթե մեռելները հարություն առնեյին:

ՅՈՒԲԱՆԱՆԻ ԶԱՅԵԸ

Ահ, պազշուտ, պտուի՛կ կին: Ահ, Բաբելոնի դուստր՝ վոսկի աչքերով յեւ վոսկենեկ թերթիչներով: Լսի՛ր, թե ի՛նչ և ասում Աստված. — արձակեցե՛ք նրա վրա մարդկային բազմությունը, թող ժողովուրդը բարեր առնե յեւ քարկոծե նրան:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Լռեցրե՛ք դրան:

ՅՈՒԲԱՆԱՆԻ ԶԱՅԵԸ

Վոր զորապետները նրան պատառ պատառ անեն իրենց սրերով, վոր ջախջախեն իրենց վահաններով:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Այդ լրբություն և:

Վորպես արյուն յեւ յերբ աստղերը գետին կթափվեն
թզնու կանաչ պտուղների նման: Հարբած մարդու
նման ե խոսում այդ մարգարեն: Ինձ համար անտա-
նելի յի նրա ձայնի հնչյունը: Յես ասում եմ նրա
ձայնը: Հրամայեցե՛ք, վոր լուե:

ՀԵՐՈՎԴ

Վո՛չ: Յես չեմ հասկանում ինչ ե ասում նա, բայց
կարող ե մարգարեյություն լինել:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Յես մարգարեյությունների չեմ

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Դուք դարձյալ իմ դստերն եք նայում: Նրան
չպետք ե նայել: Յես ձեզ արդեն ասել եմ այդ:

ՀԵՐՈՎԴ

Դուք դրանից բացի ուրիշ բան չեք ասում:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Յես այդ կրկնում եմ:

ՀԵՐՈՎԴ

Իսկ տաճարի վերականգնումը, վորի մասին այնքան
ուշ եմ ասում: Ասում

ՀԵՐՈՎԴԻՑԱԴԱ

Հանգիստ թողեք նրան:

ՀԵՐՈՎԴ

Յեա ձեզ հրամայում եմ, վոր պարեք, Սալոմե:

ՍԱԼՈՄԵ

Յեա չեմ պարի, տեսորարք:

ՀԵՐՈՎԴԻՑԱԴԱ Երթապետով

Տեսնում եք ինչպես հնազանդ ե նա:

ՀԵՐՈՎԴ

Ինձ ի՞նչ կպարի նա, թե վոչ: Ինձ համար միշեվ-
նույն ե: Յեա յերջանիկ եմ այս յերեկո: Յեա յերբեք
այսպես յերջանիկ չեմ յեղել:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ

Ի՞նչպիսի տեսք ունի նա, տեսորարք: Նա մաշյ տեսք
ունի, այնպես չե՞:

ՅԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ

Նա մաշյ տեսք ունի:

ՀԵՐՈՎԴ

Յեւ ինչո՞ւ պիտի յերջանիկ չլինեմ: Կեսարը, վոր
աշխարհի տերն ե, վոր ամեն ինչի տերն ե՝ սիրում ե
ինձ: Յեւ ահա նա ինձ թանկագին ընծաներ ե
ուղարկել: Նա խոստացել ե Հոռոմ կանչել Կապադո-
կիացի թագավորին, վոր իմ թշնամին ե: Հոռոմում

գուցե նրան խաչեն: Ինչ վոր ուզենա կարող ե անել
նա, կեսարը: Նա տեր ե: Ուրեմն տեսնում եք, վոր
յես ունեմ իրավունք յերջանիկ լինելու: Չկա աշխար-
հում վոչինչ, վոր կարողանար իմ ուրախությունը
խանգարել:

ՅՈՒԴԱՆԱՆԻ ԶԱՅԵՐ

Նա բազմած պիտի լինի իր զանին: Ծիրանի յեւ
բոսորակ պիտի լինի նրա հոգին: Յեւ նրա ձեռքին
մի վուսկի անոթ, լի իր հայնոյություններով: Յեւ
Տիրոջ հրեշտակը պիտի հարվածի նրան: Վորդերի
կերակուր պիտի լինի նա:

ՀԵՐՈՎԴԻՑԱԴԱ

Լսում եք ինչ ե ասում նա՝ ձեր մասին: Ասում ե,
վոր դուք վորդերի կերակուր պիտի լինեք:

ՀԵՐՈՎԴ

Նա իմ մասին չի խոս.ւմ: Նա իմ դեմ յերբեք
չի խոսում: Նա խոսում ե Կապադոկիացի թագավորի
մասին: Կապադոկիացի թագ-ս խրի, վոր իմ թշնամին
ե: Այդ նա՛ յե, վոր վորդերի կերակուր պիտի դառնա:
Իմ մասին չե այդ: Նա, այդ մարգարեն, իմ դեմ վոչինչ
չի ասում, բացի նրանից, վոր յես անարդար վարվեցի
կնության ատենելով իմ յեղբոր կնոջը: Գուցե յեւ
իրավացի յե նա՛ չե՞ վոր դուք անպատու եք:

ՀԵՐՈՎԴԻՑԱԴԱ

Յե՞ս եմ անպատու, յե՞ս: Յեւ այդ ասողը դո՛ւք եք,
դո՛ւք, վոր շարունակ իմ դատերն եք նայում, դուք,

Վոր ուզում եք նրան պարել տալ ձեր հանույքի համար:
Ծիծաղելի յեն ձեր խոսքերը: Յես զավակ ունեցել եմ:
Դուք եք, վոր յերբեք զավակ չեք ունեցել, նույն իսկ
ձեր հարճերից վորեւի մեկից: Այդ դո՛ւք եք անպտուղ,
վո՛չ թե յես:

ՀԵՐՈՎԴ

Լռեցե՛ք: Յես ձեզ ասում եմ, վոր դուք անպտուղ եք:
Դուք ինձ մի զավակ չտվիք յեւ մարգարեն ասում ե,
վոր մեր ամուսնութիւնը ճշմարիտ ամուսնութիւն չե:
Նա ասում ե, վոր դա ազգապիղծ ամուսնութիւն ե,
մի ամուսնութիւն, վոր դժբախտութիւն պիտի բերի:
Վախենամ թե նա իրաւացի չե: Յես հաւատացած եմ,
վոր նա իրաւացի չե: Սակայն այժմ այդ բաների վրա
խոսելու ժամանակը չե: Այժմ յ'ս ուզում եմ յերջանիկ
լինել: Յեւ իրօք՝ յես յերջանիկ եմ: Յես շատ եմ
յերջանիկ: Վոչ մի բան պակաս չե:

ՀԵՐՈՎԴԻՑԱԴԱ

Յես շատ գոհ եմ, վոր դուք այս յերեկո այդպես
լավ եք տրամադրված: Դա արտասովոր բան ե: Բայց
ուշ ե արդեն: Վերադառնանք: Մի մոռանաք, վոր
արեւիլ ծագելուն պես մենք բոլորս վորսի պիտի
գնանք: Կեսարի դեսպաններին ամեն կերպ պետք ե
պատվել, այնպես չե:

ՅԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ

Վորքան մոռնլ տեսք ունի նա, տեսարարք:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ

Այո՛, նա մուսլ տեսք ունի:

ՀԵՐՈՎԴ

Սալոմե՛, Սալոմե՛, պարեցե՛ք ինձ համար: Աղաչում
եմ, վոր պարեք ինձ համար: Տխուր եմ յես այս յերեկո:
Այո՛, յես շատ եմ տխուր այս յերեկո: Յերբ յես
այստեղ յեկա, արլան մեջ տալթաբեցի՝ դա փատ նշան ե,
յեւ յես լսեցի, յես հավատացած եմ, վոր լսեցի ողում
ինչ վոր թեւիւրի թափահարում, ինչ վոր հսկայական
թեւիւրի թափահարում: Զգիտեմ այդ ի՞նչ ե նշանա-
կում: Յես տխուր եմ այս յերեկո: Ուրեմն, պարեցե՛ք
ինձ համար, Սալոմե՛, աղաչում եմ ձեզ: Յեթե դուք
ինձ համար պարե՛ք, կարող եք պահանջել ինձնից ինչ
յեւ կամենաք յեւ յես կտամ ձեզ: Այո, պարեցե՛ք ինձ
համար, Սալոմե՛, յեւ յես կտամ ձեզ ինչ յեւ պահանջեք,
թեկուզ իմ թագաւորութեան կեսը:

ՍԱԼՈՄԵ ՎԵՐԵՆԻՎ

Դուք կտաք ինձ ամենը, տեսարարք, ինչ եւ վոր
պահանջե՞մ:

ՀԵՐՈՎԴԻՑԱԴԱ

Մի՛ պարեք, դուստր իմ:

ՀԵՐՈՎԴ

Ամեն ինչ, թեկուզ այդ իմ թագաւորութեան կեսը
լինի:

ՍԱԼՈՄԵ

Դուք յերդմում եք, տեսարարք:

ՀԵՐՈՎԴ

Յես յերդմում եմ, Սալոմե՛:

ՀԵՐՈՂԴԻՅԱԴԱ

Դուստր իմ, մի պարե՛ք:

ՍԱՆՈՄԵ

Ինչո՞վ եք յերգվում դուք, տետրա՛րք:

ՀԵՐՈՂԴ

Իմ կյանքով, իմ թագով, իմ աստվածներով: Ինչ ել
փոր կամենաք դուք՝ յես կտամ ձեզ, յեթե պարեք ինձ
համար, թեկուզ իմ թագաւորութեան կեսը պահանջեք:
Ո՛հ, Սալոմե՛, Սալոմե՛, պարեցե՛ք ինձ համար:

ՍԱՆՈՄԵ

Դուք յերգվեցիք, տետրա՛րք:

ՀԵՐՈՂԴ

Յես յերգվեցի, Սալոմե՛:

ՍԱՆՈՄԵ

Ինչ ել փոր պահանջեմ ձեզնից, թեկուզ ձեր թագա-
ւորութեան կեսը լինի դա:

ՀԵՐՈՂԴԻՅԱԴԱ

Ո՛ր՝ պարեք, դուստր իմ:

ՀԵՐՈՂԴ

Անգամ յեթե իմ թագաւորութեան կեսը լինի դա:
Դու չքնադագեղ թագուհի կլինես, Սալոմե, յեթե
կամենաս պահանջել իմ թագաւորութեան կեսը: Նա
շատ չքնաղ թագուհի կլինի, այնպես չե՛: Ահ, ցուրտ ե

այստեղ: Այստեղ մի ցուրտ քամի յե փչում յեւ յես
լսում եմ... Ինչո՞ւ յեմ լսում այդ թեւերի թափահա-
րումը: Ո՛հ, կարելի յե կարծել թե դա մի թռչուն,
մի ահագին սեւ թռչուն ե, փոր սալառնում ե պատշ-
գամբի վրա: Բայց ինչո՞ւ չեմ կարողանում տեսնել
նրան: Յեւ սարսափելի յե նրա թեւերի թափահա-
րումը: Սարսափելի յե նրա թեւերի թափահարումից
առաջացած քամին: Դա ցուրտ քամի յե: Բայց փոչ,
բոլորովին ցուրտ չե: Ընդհակառակը սաստիկ տաք ե:
Յես խեղդվում եմ: Ջուր լցրեք իմ ձեռներին: Ջուրն
տվե՛ք՝ ուտեմ: Բացե՛ք վերարկույիս կոճակները: Վո՛չ:
Թողե՛ք այդ: Այդ իմ պսակն ե, փոր ցավ ե պատճա-
ռում ինձ: Իմ վարդյա պսակը: Կարծես կրակից են այդ
ձաղիկները: Նրանք այրեցին իմ ճակատը: Նա պոկում ե
զլից ու սեղանի վրա յե գցում իր պսակը: Ահ, վերջապես յես
շնչում եմ: Վորքան կարմիր են այս թերթերը: Կարծես
արյան բծեր են սփռոցի վրա: Այդ փոշին: Չի կարելի
վորեվն նշան վորոնել ամեն մի տեսածդ բանում:
Այդպիսով անհնար ե դառնում կյանքը: Ավելի լավ ե
ասել, փոր արյան բծերը նույնքան գեղեցիկ են, փորքան
յեւ վարդի թերթերը: Ավելի լավ կլիներ այդպես
ասել: Սակայն չստանաք այդ մասին: Այժմ յես յեր-
ջանիկ եմ: Յես շատ եմ յերջանիկ: Յեւ ունեմ իրավունք
յերջանիկ լինելու, այնպես չե՛: Ձեր դուստրը կպարե
ինձ համար: Դուք պիտի պարեք ինձ համար այնպես
չե՛, Սալոմե՛: Դուք խոստացաք պարել ինձ համար:

ՀԵՐՈՂԴԻՅԱԴԱ

Յես չեմ ուզում, փոր նա պարի:

ՍԱՆՈՄԵ

Յես կպարեմ ձեզ համար, տետրա՛րք:

ՀԵՐՈՎԴ

Լսո՞ւմ եք, ինչ ե խոսում ձեր դուստրը: Նա կպարի ինձ համար: Լավ ե այդ Սալոմե, վոր պարելու յեք դուք ինձ համար: Յեվ յերբ կվերջանա ձեր պարը, մի՛ մոռանաք պահանջելու ինձնից ինչ վոր կամենաք, թեկուզ դա իմ թագավորության կեսը լինի: Յես յերդվել եմ, այնպես չե՞:

ՍԱԼՈՄԵ

Դուք յերդվել եք, տեսարա՛րք:

ՀԵՐՈՎԴ

Յեվ յես յերբեք չեմ դրժի իմ խոսքը: Յես նրանցից չեմ, վորոնք իրենց խոսքը դրժում են: Յեվ ստեղ չգիտեմ: Յես իմ խոսքի գերին եմ յեվ իմ խոսքը թագավորի խոսք ե: Կապաղոկիայի թագավորը միշտ ստում ե, բայց չե՞ վոր նա իսկական թագավոր ել չե: Նա յերկչոտի մեկն ե: Բացի այդ, նա ինձ փող ե պարտ յեվ չի ուզում տալ: Նա մինչև իսկ վերավորանք ե հասցրել իմ դեսպաններին: Նա շատ փրավորական քաներ ե ասել: Սակայն, յերբ Հոռոմ գնա, կեսարը նրան պիտի խաչ հանե: Յես հավատացած եմ, վոր կեսարը նրան կխաչե: Իսկ յեթե վոչ, միյնվնույն ե, նա վորդերի կերակուր պիտի լինի, պիտի մեռնի: Այդպես գուշակեց մարգարեն: Դեհ, Սալոմե, ինչե՞ յեք սպասում:

ՍԱԼՈՄԵ

Սպասում եմ, վոր ստրկուհիներն ինձ համար անուշահոտ ոծելիքներ յեվ յոթը ծածկույթ բերեն ու հանեն իմ սանդալները:

Ստրկուհիները բերում են անուշահոտ ոծելիքներ, յոթը ծածկույթ յեվ հանում են Սալոմեի սանդալները:

ՀԵՐՈՎԴ

Ահ, դուք մերկ փոտներով պիտի պարեք: Այդ լավ ե, շատ լավ ե այդ: Ձեր փոքրիկ փոտները նման կլինեն սպիտակ աղավջակների: Նրանք նման են մանրիկ, սպիտակ ծաղիկների, վոր պարում են ծառի վրա... Ահ, վոչ: Նա արյան մեջ պիտի պարե: Գետնի վրա արյուն ե: Յես չեմ ուզում, վոր նա արյան մեջ պարե: Դա շատ վատ նշան կլինի:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Ձեզ ի՞նչ թե նա արյան մեջ կպարե: Ձե՞ վոր դուք գնում եյիք արյան միջով, դուք...

ՀԵՐՈՎԴ

Ինձ ի՞նչ: Ահ, նայեցեք լուսին: Նա կարմիր դարձավ: Նա դարձավ կարմիր, վորպես արյուն: Այդ լավ գուշակեց մարգարեն: Նա գուշակեց, վոր լուսինը կդառնա կարմիր, վորպես արյուն: Այդպես ասաց նա, այնպես չե՞: Դուք բռնորդ այդ լսեցիք: Լուսինը դարձավ կարմիր, վորպես արյուն: Դուք այդ չե՞ք տեսնում:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Յես այդ լավ եմ տեսնում: Յեվ ասողերը թափվում են, վորպես թզենու կանաչ պտուղներ, այնպես չե՞: Յեվ արեվը դառնում ե սեվ, վորպես ստեղծվի վերարկու յեվ յերկրի թագավորները սոսկում են: Ահա այդ գուցե յեվ յերեվում ե: Գոնե մի անգամ իր կյանքի ընթացքում, մարգարեն իրավացի դուրս եկավ — յերկրի թագավորները սոսկում են: Սակայն վերադառնա՛նք: Դուք տկար եք: Հոռոմում կկարծեն թե դուք խելագարվել եք: Վերադառնա՛նք, ասում եմ ձեզ:

ՅՈՒՐԱՆԱՆԻ ԶԱՅՆՈՒ

Ո՞վ ե նա, վոր զալիս ե Յեդումից, վոր զալիս ե Բոսրայից իր ծիրանի հագուստով, վորը շողշողում ե իր հագուստի գեղեցկությամբ յեւ վորը քայլում ե ամենակարող զորությամբ: Ինչո՞ւ նրա հագուստը բոսորաներկ ե:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Վերադառնա՛նք: Այդ մարդու ձայնը զայրույթով ե լցնում իմ սիրտը: Յես չեմ ուզում, վոր իմ դուստրը պարի, քանի վոր այդ մարդն աղաղակում ե այնտեղ: Յես չեմ ուզում, վոր իմ դուստրը պարի, քանի վոր դուք այդպէս եք նայում նրան: Վերջապէս յես չեմ ուզում, վոր նա պարի:

ՀԵՐՈՎԴ

Վեր մի՛ յննի, իմ կին, իմ թագուհի, անոգուտ ե այդ: Մինչեւ վոր նա չպարի՝ յես չեմ վերադառնա: Պարեցե՛ք, Սալոմե, պարեցե՛ք ինձ համար:

ՀԵՐԻՎԴԻՅԱԴԱ

Մի՛ պարեք, դուստր իմ:

ՍԱԼՈՄԵ

Յես պատրաստ եմ, տնտրա՛րք:

Սալոմեն պարում ե յոմը ծածկույթի պարը:

ՀԵՐՈՎԴ

Ահ, սքանչելի՛ յե, սքանչելի՛ յե, այդ: Տեսնո՞ւմ եք, նա պարեց ինձ համար, ձեր դուստրը: Մոտեցե՛ք, Սալոմե, մոտեցե՛ք, վորպէսզի յես կարողանամ վար-

ծատրել ձեզ: Ահ, պարուհիներին յես լալ եմ վարձա-տրում: Յես քեզ լալ պիտի վարձատրեմ: Ինչ եւ վոր կամենա՛ պիտի տամ քեզ: Ասա՛, ի՞նչ ես ուզում, Սալոմե՛:

ՍԱԼՈՄԵ ծունկ չորելով

Յես ուզում եմ, վոր այժմ իսկ քերեն ինձ համար, արծաթյա ափսեյի վրա...

ՀԵՐՈՎԴ ծիծաղելով

Արծաթյա ափսեյի վրա... Այո՛, իհարկե արծաթյա ափսեյի վրա... Վորքան նուզելի՛ յե սա, նայեցեք, այնպես չե՛: Ի՞նչ եք ուզում, վոր քերեն ձեզ համար արծաթյա ափսեյի վրա, իմ սիրելի, իմ գեղանի Սալոմե, դուք վոր Հրեյաստանի կույսերի մեջ ամենից չքնաղագեղն եք: Ի՞նչ եք ուզում, վոր քերեն ձեզ համար արծաթյա ափսեյի վրա: Ասացեք ինձ: Ինչ եւ վոր լինի պիտի տամ ձեզ: Իմ գանձերը ձե՛զ են պատկանում: Ուրեմն ի՞նչն ե այդ, Սալոմե:

ՍԱԼՈՄԵ վեր կենալով

Յոբանաանի գլուխը:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Ահ, այդ լալ ասացիր, դուստր իմ:

ՀԵՐՈՎԴ

Վո՛չ, վո՛չ:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Այդ լալ ե ասված, դուստր իմ:

ՀԵՐՈՎԴ

Վո՛չ, վո՛չ, Սալոմե՛, դուք այդ չեք պահանջում

ինձնից: Ձեր մորը մի՛ լսեք: Նա միշտ վատ խորհուրդներ և տալիս ձեզ: Նրան չպետք է լսել:

ՍԱՆՈՄԵ

Յես իմ մորը չեմ լսում: Դա իմ սեփական հանույքի համար է, փոր պահանջում եմ յես Յոքանաանի գլուխը արծաթյա ափսեյի վրա դրած: Դուք յերդվել եք, Հերովդ: Մի՛ մոռնաք, փոր դուք յերդվել եք:

ՀԵՐՈՎԴ

Յես գիտեմ այդ: Յես յերդվեցի իմ աստվածներով: Յես այդ լավ գիտեմ: Սակայն աղաչում եմ ձեզ, Սալոմե՛, մի՛ այլ բան պահանջեցեք ինձնից: Պահանջեցեք իմ թագավորութեան կեսը յեվ յես կտամ ձեզ: Բայց մի պահանջեք այն, ինչ պահանջեցիք դուք:

ՍԱՆՈՄԵ

Յես ձեզնից Յոքանաանի գլուխն եմ պահանջում:

ՀԵՐՈՎԴ

Վո՛չ, փո՛չ, յես չեմ ուզում:

ՍԱՆՈՄԵ

Դուք յերդվել եք, Հերովդ:

ՀԵՐՈՎԴԻՅԱՆԱ

Այո՛, դուք յերդվել եք: Բոլորը լսեցին ձեզ: Դուք յերդվեցիք բոլորի առաջ:

ՀԵՐՈՎԴ

Դուք լռեցե՛ք, յես ձեզ հետ չեմ խոսում:

ՀԵՐՈՎԴԻՅԱՆԱ

Իմ դուստրն իրավացի չէ, յերբ այդ մարդու գլուխն է պահանջում: Այդ մարդը լուստանք է թափում իմ վրա: Նա հրեշավոր բաներ է ասում իմ մասին: Յերևում է, փոր իմ դուստրը սիրում է իր մորը: Մի՛ զիջեք դուստր իմ: Նա յերդվել է, յերդվել է նա:

ՀԵՐՈՎԴ

Լռեցե՛ք, հետո մի՛ խոսեք: Սալոմե՛, խոհեմ պետք է լինել, այնպես չե՛: Այնպես չե՛, պետք է լինել խոհեմ: Յես ձեր վերաբերմամբ յերբեք խիստ չեմ յեղել: Յես ձեզ միշտ սիրել եմ: Դուք յեվ չափից դուրս եմ սիրել ձեզ: Ուրեմն այդ մի պահանջեք: Սարսափելի չէ, զարհուրելի չէ ինձնից այդ պահանջել... Յեվ իրոք յես չեմ հավատում, փոր դուք լուրջ եք պահանջում այդ: Դիմադրած մարդու մի գլուխ — միթե այլանդակ բան չե՞ դա: Աղջիկն այդպիսի բանի չպիտի նայել: Յեվ ի՞նչ հանույք պիտի ստանաք դրանից: Վոչինչ: Վո՛չ, փո՛չ, դուք այդ չեք ուզում: Մի ակնթարթ լռեցեք ինձ: Յես մի զմրուխտ ունեմ — մի մեծ ու կոյր զմրուխտ, փորն ինձ կեսարի սիրելին է ուղարկել: Յեթե դուք նայեք այդ զմրուխտին — կտեսնեք այն, ինչ կատարվում է անսահման տաքածութեան վրա: Ինքը կեսարը յերբ ցիրկ է գնում հետը մի այդպիսի զմրուխտ է վերցնում: Բայց իմն ավելի մեծ է: Աշխարհիս ամենախոշոր զմրուխտն է դա: Դուք այդ եք ուզում, այնպես չե՛: Պահանջեցեք յեվ յես կտամ ձեզ այն:

ՍԱՆՈՄԵ

Յես Յոքանաանի գլուխն եմ պահանջում:

ՀԵՐՈՎԴ

Դուք ինձ չեք լսում, դուք չեք լսում ինձ: Թույլ տալիս խոսեմ, Սալոմե:

ՍԱԼՈՄԵ

Յոթանասնի գլուխը:

ՀԵՐՈՎԴ

Վո՛չ, դուք այդ չեք ուզում: Դուք այդ լոկ ինձ տանջելու համար եք ասում: Լոկ այն պատճառով, վոր մի ամբողջ յերեկո ձե՛զ եյի նայում յես: Այո՛, այդպես ե: Յես ամբողջ յերեկոն ձեզ եյի նայում: Ձեր գեղեցկութունը շփոթեցրեց ինձ: Ձեր գեղեցկութունը սարսափելի կերպով շփոթեցրեց ինձ յեմ յես չափից դուրս շատ նայեցի ձեզ: Բայց յես այլեմս այդպես չեմ անի: Չպետք ե նայել վո՛չ առարկաներին, վո՛չ մարդկանց: Միայն հայելիներին պետք ե նայել: Վորովհետեմ հայելիները լոկ դիմակներ են ցույց տալիս մեզ: Ո՛հ, ո՛հ, գինի՛, յես ծարավ եմ: Սալոմե՛, բարեկամ լինենք: Վերջապես տեսե՛ք... Ի՞նչ եյի ուզում ասել յես: Այն ի՞նչ եր: Ա՛հ, մտաբերեցի: Սալոմե՛, մոտ յեկեք: Վախենամ ինձ չլսեք: Սալոմե՛, դուք գիտեք իմ սպիտակ սիրամարգներին, իմ սիրտն սպիտակ սիրամարգներին, վոր զբոսնում են այգում մրտենիների յեմ նոճիների միջեմ: Նրանց կուռցները վոսկեգոծ են յեմ այն հատիկները, վոր նրանք են կտցահարում — նույնպես վոսկեգոծ են: Յեմ այդ սիրամարգների վոտները ներկված են, ծիրանագո՛ւյն: Յերբ նրանք կանչում են՝ անձրեմ ե գալիս, իսկ յերբ սկսում են պարել իրենց սիրամարգի պարը՝ յերկնքում լուսնյակն ե յերեմում: Նրանք զույգ-զույգ են ման

գալիս նոճիների ու սեմ մրտենիների միջեմ յեմ նրանցից, ամեն մեկին խնամում ե մի առանձին ստրուկ: Յերբեմն, նրանք թռչում են ծառերի մեջ, յերբեմն հանգատում մարգագետնի վրա յեմ լճակի շուրջը: Աշխարհիս յերեսին դրանցից սքանչելի թռչուն չկա... Աշխարհում չկա վոչ մի թագաւոր, վոր այդպիսի սքանչելի թռչուններ ունենա: Յես հավատացած եմ, վոր կեսարն անգամ չունի այդպիսի զմայելի թռչուններ: Յեմ յես կտամ ձեզ հիսուն սիրամարգ: Նրանք ամենուրեք կուռցեցեն ձեզ յեմ նրանց միջեմ դուք մի ահագին, սպիտակ ամպով շրջապատված լուսնյակի նման կլինեք: Յես ձեզ կտամ բոլորը: Միայն հարյուր հատ ունեմ յես յեմ աշխարհում չկա յոչ մի թագաւոր, վորն իմ սիրամարգների նման սիրամարգ ունենա, բայց յես ձեզ կնվիրեմ բոլորը: Միայն թե պետք ե ազատեք ինձ իմ խոստումից յեմ չպահանջեք այն, ինչ պահանջեցիք:

Նա դատարկում ե զինու բաժակը:

ՍԱԼՈՄԵ

Տվե՛ք ինձ Յոթանասնի գլուխը:

ՀԵՐՈՎԴԻՅԱՆԱ

Այդ լավ ե ասված, դուստր իմ: Դուք ծիծաղելի յեք ձեր սիրամարգներով:

ՀԵՐՈՎԴ

Լոնցեք: Դուք շարունակ աղաղակում եք: Դուք աղաղակում եք, վորպիս արյունարբու մի գազան: Չպետք ե այդպես աղաղակել: Ձեր ծայնը գրգռում ե

ինձ: Լռեցե՛ք, ասում եմ ձեզ: Սալումե՛, մտածեցիք թե ինչ եք անում: Դուք ե Աստծուց ե ուղարկված այդ մարդը: Յես հավատացած եմ, վոր նա Աստծուց ե ուղարկված: Նա սուրբ մարդ ե: Աստծո աջն ե դիպել նրան: Այդ խոսքերն Աստված ե դրել նրա բերանը: Պալատում, ինչպես յեվ անապատում Աստված միշտ նրա հետ ե: Համենայն դեպս, դա հնարավոր ե: Վոչ վոր չգիտն, բայց գուցե Աստված նրա կողմն ե յեվ նրա հետ: Յեվ յեթե նա մեռնի, գուցե դժբախտություն պատահի: Վերջապես նա ասաց, վոր այն որը յերբ նա մեռնի, մեկին դժբախտություն պիտի պատահի: Այդ միայն ինձ կարող ե պատահել: Հիշո՞ւմ եք, յերբ յես այստեղ յեկա՝ սայթաքեցի արշան մեջ: Բացի դրանից յես լսեցի թեմկերի թափահարում: Դրանք շատ վատ նշաններ են: Ուրիշ նշաններ ել կային: Յես հավատացած եմ, վոր կային յեվ այլ նշաններ, թեյեվ յես չնկատեցի նրանց: Ուրեմն, Սալումե՛, չե՞ վոր դուք չեք կամենում, վոր ինձ դժբախտություն պատահի: Դուք այդ չեք կամենում: Վերջապես լսեցե՛ք ինձ:

ՍԱԼՈՄԵ

Տվե՛ք ինձ Յոքանաանի գլուխը:

ՀԵՐՈՎԴ

Տեսնո՞ւմ եք, դուք ինձ չեք լսում: Բայց հանգիստ յեղեք: Յես բոլորովին հանգիստ եմ: Յես շատ հանգիստ եմ: Լսեցե՛ք, յես թագուն պահած զարդեր ունեմ, վոր ձեր մայրն իսկ չի տեսել, բոլորովին արտասովոր զարդարանքներ: Յես ունեմ մարգարտյա մի մանյակ, վոր չորս շարք մարգարտից ե հյուսված: Կարծես

լուանյակներ լինեն արծաթյա ճառագայթների վրա շարված: Կարծես փոսկեղեն մի ցանցով բռնված հիսուն լուանյակ լինի: Մի թագունի կրել ե այդ իր փղոսկրյա լանջին: Դու յեվ թագունի ուման գեղանի կլինես, յեթե կրես այն: Յես ունեմ յերկու անասկ մեղեսիկներ: Մեկը սեւ ե, վորպես գինի, մյուսը կարմիր, վորպես ջրախառն գինի: Յես տոպազներ ունեմ, վոր դեղին են, վորպես վագրի աչքերը յեվ տոպազներ, վոր վարդագույն են, վորպես աղափլիների աչքերը յեվ տոպազներ, վոր կանաչ են, վորպես կատուների աչքերը: Յես փոպալներ ունեմ, վորոնք միշտ փայլում են բոցով յեվ փոպալներ, վորոնք սիրտ են տխրեցնում յեվ վախենում են մութից: Յես ունեմ յեղնկաքարեր, վոր մեռած կնոջ բիբերի յեն նման, յես ունեմ լուսնաքարեր, վորոնք փոխվում են, յերբ լուսնյակն ե փոխվում յեվ գունատվում են յերբ արեւն տեսնում: Յես ունեմ շափուղներ, վոր ձվի չափ խոշոր են յեվ կապույտ են, վորպես կապույտ ծաղիկները: Նրանց մեջ ծովն ե տատանվում յեվ լուսինը բնավ չի պղտորում նրա ալիքների կապույտը: Յես ունեմ փոսկեքարեր յեվ կապույտ գմբուխտներ, յես ունեմ փոսկեպրասներ ու սուտակներ, յես ունեմ սարդիյոններ յեվ հակինթներ, յեվ քաղքեղոնի քարեր յեվ յես ձեզ կտամ այդ բոլորը, այո՛, բոլորը յեվ կալեւացնեմ դրան այլ բաներ յեվս: Հնդկաստանի թագավորը, նորերս թութակների փետուրներից հյուսված մի հովահար ե ուղարկել ինձ: Նումիդայի թագավորը՝ մի զգեստ, վոր ջալլամների փետուրներից ե հյուսված: Յես ունեմ մի բյուրեղ, վորին նայելը կանանց արգելված ե, նույն իսկ պատանիները չեն կարող նայել առանց նախորդ գանահարության յենթարկվելու: Մի սաղափյա արկ-

դում յես ունեմ յերեք սքանչելի փերուգ: Յեթե այդ փերուգները ճակատիդ կրես՝ կարող ես յերեվակայել այնպիսի բաներ, վորոնք գոյութիւն չունեն, իսկ յեթե ձեռքիդ վրա կրես, կարելի չե կանանց անպտուղ դարձնել: Դրանք մեծարժեք գանձեր են: Անգին գանձեր են դրանք: Յեւ այդ բոլորը չե: Յեքենյա մի արկղիկում յես ունեմ սաթի գավաթներ, վոր վոսկեղեն խնձորների յ'ն նման: Յեթե այդ գավաթների մեջ մի թշնամի թույն ածն՝ նրանք արծաթյա խնձորների նման են դառնում: Մի սաթազարդ արկղում յես ունեմ յերկու սանդալ վոր ապակիյով են պատած: Յես ունեմ վերնագգեստներ Սեռացոց յերկրներից յեւ ապարանջաններ կարմիր հակինթներով զարդարւած յեւ համկարերով, վոր Յեփրատ քաղաքից են բերում... վերջապես ի՞նչ ես ուզում, Սալոմն': Ասա՛ ինձ, ի՞նչ ես ցանկանում՝ յեւ յես կտամ քեզ: Յես քեզ կտամ բոլորը, ինչ յեւ կամենաս, բացի միայն մի բանից: Յես քեզ կտամ ամեն ինչ, վոր կարող եմ, բացի մի կյանքից: Յես քեզ կտամ քահանայապետի վերարկուն: Յես քեզ քրքարանի վարագույրը կտամ:

ՀՐԵՅԱՆԵՐ

Ո՛հ, ո՛հ...

ՍԱԼՈՄԵ

Տուր ինձ Յոբանաանի գլուխը:

ՀԵՐՈՎԴԻ իր ամուսնի մեջ ընկղմվելով՝

Տվեք սրան, ինչ վոր պահանջում ե: Իրավ վոր իր մոր դուստրն ե սա: Առաջին գինւորը մոտենում ե: Հերովդիստոյան հանում ե տետրարքի մատից մահվան մատանին յեւ տալիս ե զինվորին:

վորն անմիջապէս տա՛ւում ե այն դահճին: Դահճը զարհուրած մարդու հերպարանք ունի: Ո՞վ վերցրեց իմ մատանին: Իմ աջ ձեռքին մի մատանի կար: Ո՞վ խմեց իմ գինին: Իմ գավաթում գինի կար, գինիյով լիքն եր իմ գավաթը: Մեկը խմեց այն: Ո՛, յես հավատացած եմ, վոր մեկին դժբախտութիւն պիտի պատահի: Դահճը ջրհորն ե իջնում: Ա՛հ, ինչո՞ւ յես խոսք տալի: Թագաւորները յերբեք խոսք չպիտի տան: Յեթե նրանք իրենց խոսքը չեն պահում՝ սարսափելի յե, յեթե պահում են՝ նույնպէս սարսափելի յե:

ՀԵՐՈՎԴԻԹԱՆ

Իմ կարծիքով դուստրս լավ վարվեց:

ՀԵՐՈՎԴԻ

Յես համոզված եմ, վոր մի դժբախտութիւն պիտի գա:

ՍԱԼՈՄԵ Թեքում ե դեպի ջրհորն ու ականջ ե դնում:

Վոչ մի ծայն չկա: Յես վաչինչ չեմ լսում: Ինչպէս ե, վոր չի ճշում նա, այդ մարդը: Ա՛հ, յեթե մեկն ուզենար ինձ սպանել՝ յես կճչայի, կմաքառայի, չեյի ուզենա տանջվել: Զարկ, զարկ, նաաման: Զարկ, ասում եմ քեզ... Վո՛չ, յես վաչինչ չեմ լսում: Մի դժնի լուծիւթիւն ե տիրում այնտեղ: Ա՛հ, մի բան գետին ընկավ: Յես լսեցի, մի բան ընկավ: Դահճի սուրն եր այդ: Նա վախնում ե, այդ ստրուկը: Թույլ տվեց վոր սուրը ցած ընկնի: Դահճը չի համարձակւում սպանել նրան: Թուլամորթ ե այդ ստրուկը: Զինվորներ պետք ե ուղարկել: Նկատելով Հերովդիստոյայի մանկավիճին՝ դիմում ե նրան: Յեկ այստե՛ղ: Դու նրա՛ ընկերն ես, վոր մեռավ, այնպէս

չն: Դեռ բազմական չեն մեռելները: Առաջեր զինվոր-
ներին, վոր ցած իջնեն ու բերեն այն, ինչ յես պահան-
ջում եմ, ա՛յն, ինչ տետրաբքը խոստացել ե ինձ, ա՛յն,
ինչ ինձ ե պատկանում: Մանկավիթը հետ ե բաշվում, Սարմեն
զինվորներին ե դիմում, Զինվորներ՛ր, այստեղ յեկեք: Իջե՛ք
ջրհորն ու բերե՛ք ինձ այն մարդու գլուխը: Զինվորնե՛ր
հետ են բաշվում: Տետրա՛րք, տետրա՛րք, հրամայեցեք ձեր
զինվորներին վոր բերեն Յոքանաանի գլուխը: Մի մեծ,
սեւ ձեռք՝ դահճի ձեռքը, յերեվում ե չրհորից Յոքանաանի գլուխն
արծաթյա վահանի վրա պահած: Սարմեն խլում ե այն: Հերովդը վերնա-
զգեստով ծածկում ե իր յերեսը: Հերովդիսպառն ծիծաղում ե յեվ
հովհարով ինքն իրեն հովհարում: Նազովրեցիք ծուկ են չորում յեվ
սկսում են աղոթել: Ա՛հ, դու չուզեցիր թույլ տալ, վոր յես
համբուրեմ քո բերանը, Յոքանաան: Ահա, կհամբուրեմ
յես ա՛յժմ: Կկծեմ իմ ատամներով, ինչպես հաւած
պտուղն են կծում: Այո՛, յես կհամբուրեմ քո բերանը
Յոքանաան: Յես ասացի այդ, այնպես չե՛, յես քեզ
ասացի այդ: Ահա յես կհամբուրեմ այժմ... Բայց
ինչո՞ւ դու ինձ չես նայում, Յոքանաան: Բո աչքերը,
վոր այնպես սարսափելի յեյին, վոր այնպես լի յեյին
զայրույթով ու արհամարանքով, ահա փակված են:
Բա՛ց քո աչքերը: Բարձրացրո՛ւ քո թերթիչները, Յոքա-
նաան: Ինչո՞ւ չես նայում: Ի՞նժե դու վախենում ես
ինձե՛ից, Յոքանաան, վոր չես ուզում նայել ինձ: Յեվ
քո լեզուն, վոր կարմիր ոձի յեր նման, թույն թափող
մի ոձի, այլեւս չի շարժվում, այլեւս փոչինչ չի ասում,
Յոքանաան, այն կարմիր իժք, վոր իմ վրա յեր
թափում իր թույնը: Տարորինակ ե դա, այնպես չե՛:
Ինչպե՞ս յեղավ, վոր կարմիր իժն այլեւս չի շարժվում:
Դու ինձ չուզեցիր, Յոքանաան: Դու ինձ մերժեցիր:
Դու անարգ խոսքեր ասացիր ինձ: Դու ինձ հետ վար-

վեցիր, վորպես մի ստրկուհու, վորպես մի պտուղի
կնոջ հետ, ինձ, Սալոմեյիս, Հերովդիսպառն դստեր,
Հրեյաստանի արքայադստեր հետ: Յեվ ահա՛, Յոքա-
նաան, յես դեռ ապրում եմ, իսկ դու մեռած ես յեվ
քո գլուխն ինձ ե պատկանում: Յեվ ինչ կամենամ
կարող եմ անել: Յես կարող եմ քո գլուխը շներին
նետել, նետել ողի թռչուններին: Այն ինչ կթողնեն
շները, կուտեն ողի թռչունները: Ա՛հ, Յոքանաան,
Յոքանաան, դու միշակ մարդն եիր վորին յես սիրում
եյի: Մնացած բոլոր մարդիկ զգվանք են ներշնչում
ինձ: Բայց դու, դու գեղեցիկ եիր: Բո մարմինը
փղոսկրյա մի սյուն եր արծաթյա պատվանդանի վրա:
Նա մի այգի յեր լի աղամլիներով յեվ արծաթյա
շուշաններով: Նա արծաթյա աշտարակ եր փղոսկրյա
վահաններով զարդարված: Աշխարհում չկար փոչինչ,
վոր ափելի սպիտակ լիներ, քան քո մարմինը: Աշխարհում
չկար փոչինչ, վոր այնպես սեւ լիներ, վորպես քո
մազերը: Աշխարհում չկար փոչինչ, վոր այնպես կարմիր
լիներ, ինչպես քո բերանը: Բո ծայր մի բուրվառ եր,
վոր արտասովոր բուրմունք եր սփռում յեվ յերք յես
լսում եյի քեզ մի արտասովոր յերաժշտություն եյի
լսում: Ա՛հ, ինչո՞ւ դու ինձ չնայեցիր, Յոքանաան: Բո
ձեռների յեվ հայհոյանքների հետեւը պահեցիր դու քո
դեմքը: Դու քո աչքերը կապեցիր այն մարդու կապով,
վորն ուզում ե իր Աստծուն տեսնել: Յեվ ահա դու
տեսար նրան. քո Աստծուն, Յոքանաան, բայց ինձ,
ինձ դու յերբեք չտեսար: Յեթե տեսնեիր ինձ
— կսիրեիր դու: Յես քեզ տեսա, Յոքանաան յեվ
սիրեցի քեզ: Ա՛հ, ինչպես սիրեցի յես քեզ: Յես դարձյալ
սիրում եմ քեզ, Յոքանաան: Յես փոչ փոքի չեմ
սիրում բացի քեզից... Յես ծարավ եմ քո գեղեց-

կուլթյան: Յեա քաղցած եմ քո մարմնին: Յեւ վոչ գինին, վոչ պտուղները չեն կարող հագեցնել իմ ցանկությունը: Ի՞նչ անեմ հիմա, Յորանաան: Վոչ գետերը, վոչ մեծագույն ջրերը չեն կարող հագեցնել իմ ցանկությունը: Յեա մի կույս եյի յեւ զու գրկեցիր ինձ կուսությունիցս: Յեա վոխջախոհ եյի յեւ զու հուր լցրիր իմ յերակների մեջ: Ահ, ահ, ինչո՞ւ զու չտեսար ինձ, Յորանաան: Յեթե զու տեսնեյիր ինձ՝ կսիրեյիր: Յեա լավ գիտեմ վոր կսիրեյիր ինձ յեւ սիրո խորհուրդն ավելի մեծ ե, քան մահվան խորհուրդը: Միայն սիրո վրա պետք ե նայել:

ՀԵՐՈՉԴ

Նա հրեշտիոր ե, քո դուստրը, նա բոլորովին հրեշ ե: Նրա արածը մեծ մեղք ե: Յեա համոզված եմ, վոր դա մեծ մեղք ե անհայտ Աստծո դեմ:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Ինձ դուր ե գալիս իմ դասեր արածը յեւ այժմ ուզում եմ այստեղ մնալ:

ՀԵՐՈՎԴ

Ահ, ազգապիղծ կինն ե խոսում: Գնա՛նք: Յեա այլեւս այստեղ մնալ չեմ ուզում: Գնա՛նք, ասում եմ յես քեզ: Յեա համոզված եմ, վոր դժբախտություն պիտի պատահի: Մանասե՛, Իսախա՛ր, Ոգիյա՛, ջահերը հանգցրե՛ք: Յեա չեմ ուզում, վոր առարկաներն ինձ նային: Հանգցրե՛ք ջահերը: Թագցրե՛ք լուսնյակը: Թագցրե՛ք աստղերը: Թագնվե՛նք մեր պալատում, Հերովդիյադա: Յեա սկսում եմ վախենալ:

Ստրուկները հանգցնում են ջահերը: Աստղերը չբանում են: Մի մեծ, սեւ ամպ ե անցնում լուսնի վրայով յեւ բոլորովին ծածկում ե նրան: Բեւի վրա անթափանց խավար ե իջնում: Տետրարբն սկսում ե սանդուխտով վեր բարձրանալ:

ՍԱԼՈՄՆՅԻ ԶԱՅՆԸ

Ահ, յես համբուրեցի քո բերանը, Յորանաան, յես համբուրեցի քո բերանը: Դառնահամ են քո շրթունքները: Մի՞թե արյան համն ե այդ: Գուցե ոիրո՞ համն ե: Ասում են, վոր սերը դառնահամ ե: Բայց ի՞նչ փույթ . . . ի՞նչ փույթ . . . յես համբուրեցի քո բերանը, Յորանաան: Յես համբուրեցի քո բերանը:

Լուսնի մի շող ընկնում ե Սալոմեյի վրա յեւ լուսավորում նրան:

ՀԵՐՈՎԴ Հեռ ե նայում յեւ տեսնում ե Սալոմեյին:

Սպանեցե՛ք այդ կնոջը:

Զինվորները հարձակվում են յեւ իրենց վահաններով ջախջախում են Սալոմեյին, դատեր Հերովդիյադայի, արքայադստերը Հրեյաստանի:

ՎԱՆԵՐԻՑ ԲՐՅՈՒՍՈՎ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 ԼԻՆԵԼ ՄԵՆԱԿ...

Դգվում ե դեմքըս հողմը քնքույշ,
Ամպերում հանգավ հուրը կարմիր,
Յեվ նորից ահա՝ մեղմ ու անույշ
Իջավ յերեկոն, փովեց անծիր... —

Չորս կողմից մութը պարզվում ե ինձ
Դգվանքով մեղմ ու սիրափափագ.—
Վերջին վայելք իմ, իմ վերջին իղձ՝
Լինել հեռավոր, լինել մենակ...

2 ՏԽՈՒՐ ՅԵՐԵԿՈ

Տխուր խավար, տխուր քամի — ծառերի շրջուն.
Յերեկոն իր հեռավոր յերազն ե հիշում...

Շրջում տխուր, շշնջում ե քամին մի անուն.
Անոթեվան կրակներ, մթին բարձունքում:

Աշնան հյուրը՝ հողմը տարավ, յերազներ, յեվ ձեզ.
Թղթենինները մութի մեջ՝ ստվերների պես,

Մութն ե նիրհում, նինջ ե տիրում, նինջ ե իմ հոգում,
Ո՞վ կասե ինձ «սիրում եմ» — լին այս միգում:

Մութ ե, մռայլ, հողմը մեռավ, լուսթյուն մեռած.
Ի՞նչ էտորել քո վրա, կորած իմ յերազ:

3 ՄԵՆՈՒՔՅՈՒՆ

Նահանջի՛ր, վորպես ծով, ցերեկի սնամեջ, ընդունայն խռովում.
Մենություն, կանգնիր լուռ, լուսնի պես լուռ կանգնիր յեվ իմ ժամը հսկիր.
Լսում եմ՝ տեղատու ջրերում քարերն են, քարերն են վորոտում.
Տեսնում եմ՝ մայրամուտի կաս-կարմիր մշուշն ե ծխանում ցանուցիր:

Մերթ ալմաս թագերով շողշողուն, մերթ ծաղկե պսակով լուսեղեն,
Մերթ հարճի հագուստով խղճալի, մերթ ծիրան-ծածկոցով թագուհու,
Մերթ խնդուն հողմի պես գարնային, մերթ անհուն տանջանքից հոգնադեմ—
Դառնում են խմբովին — որորվում, դառնում են այն կույսերը հեռու...

Ձեր հայացքը գգվող ե նորից, ձեր քայլվածքը նորից որորուն,
Ուրեմն նո՛ւյնն եմ յես, յեթե ինձ, յեթե հետ ե դառնում աշխարհն այն
Մոտեցե՛ք, յես չեմ մոռացել, իմ քույրեր, փոփոխուն որերում,
Իմ քույրեր, վոչ վոքի չեմ հայտնի անուններդ հավետ սրբազան:

Ձեր քնքույշ մատներին կըսեղմեմ, կըսեղմեմ բիբերոս բորբորուն,
Իմ գլուխը հոգնած կըղնեմ, կըղնեմ կրճերին ձեր ծանոթ,
Քնքազգին, քնքազգին իմ քույրե՛ր, մանկուց եմ ընդունել յես յերդում՝
Լոկ ձեզ հետ լինում եմ յերջանիկ, հարազատ եմ լինում լոկ ձեզ մոտ:

Հանդարտվում են հեռվում ու լուռ, ալիքներն ահավոր ու խռով,
Լուսնյակի ճաճանչներն ոձեղեն խաղում են ու մարում դողդոջուն.
Ու քույրս թեքվել ե իմ վրա յեվ հուշիկ, յեվ հուշիկ խոսքերով
Թոթովում ե անուշ ու պատմում՝ մեր անջատ տարիներն ե հիշում:

Յեա հոգնել եմ ապրելուց մարդկանց մեջ յեվ որերում,
 Փոփոխումից խոհերիս, փոփոխումից ձգտումիս,
 Ճշմարտության ձեւերից, հանգերից իմ յերգերում՝
 Չանծրացել եմ ու հոգնել իմ անունից, անունից...
 Ո՛ր, մարդիկ ի՛նչ... նրանցից հեշտ ե հավետ հեռանալ,
 Բայց իմ առաջ, խուզարկու մրտքիս ահեղ զնդանում
 Ահա ձգվում ե հեռուն, սողվում դեպի մի անցյալ
 Անջնջելի այն շղթան, փորը հուշ են անվանում...
 Յեվ գնում եմ կորացած, ուսերիս՝ բռն այդ աճող —
 Հիյացումներ, անկումներ, անուններ ու տարիներ
 Հետքս յերգերս են վազում աղաղակով ու ճիչով,
 Հղացումներս անավարտ — ահաբեկող ստվերներ...
 Յեվ աչքերս են կուրացնում ցուքեր, ցուքեր անհամար
 (Սրտիս շիրմում մոխրացած խոսքեր անթիվ գրքերից)
 Կանանց անթիվ մարմիններ յեվ ազահ, յեվ ոճաբար
 Կախվում են այդ շղթայից, կախվում են իմ շղթայից...

Այո՛, կանայք, յես ինքս եմ, ինքս եմ մոտքս կանչել ձեզ
 Խեղդուկ մահճից, խուցերից, ուղիներից անհամար
 Յեվ արբել ենք յերկուսով ակնթարթում հրակեզ
 Յեվ նետել ե միյասին մեզ հոսանքը քարից քար...
 Ամռանությամբ յերկնային կապված եք ինձ հավիտյան,
 Այդպես անթիվ գետերն են կապված ընդմիշտ ծովի հետ.
 Կնքված եք իմ կնիքով, ձեր վրա կա մի նշան,
 Ձեզ եմ մատնել իմ հոգին մի վայրկյան յեվ առհավետ...
 Վոմանք մեռել են արդեն, դավաճանել են վոմանք,
 Բայց բոլորն ել հետս են միշտ, ուր ել, ուր ել գնամ յես
 Յեվ քարշում եմ յես առաջ թափելով հար ճիգ ու ջանք

Որից դեպի որը նոր կորաքամակ, փորպես յեզ.
 Յեվ ուժասպա՛ռ, ուժասպա՛ռ, հոգնարեկ ու հոգնատանջ
 Պատվանդանն եմ տանում յես շիրմախաչիս ծանրանխտ
 Մարմիններ ու մարմիններ, փոր քայքայել եմ առաջ,
 Վոր նըվիրել են յերբեմն ինձ ցավ, զգվանք յեվ հանգիստ:

Յեվ խոհներս անհամար — զգեստներով վոսկեզարդ,
 Նվիրական իմ խոհեր փայփայված ու սիրասուն
 Կենդանացած իմ սիրով, առած մարմին յեվ արյուն —
 Այս շղթան ել պարտված եմ տանելու յես հնազանդ:
 Խոհներ կան խոր ու թագուն... Յեվ յես նորից մանկան պես
 Դետնատարած ընկնում եմ, դեմքս ծածկում դողահար.
 Խոհներ կան պարզ-լուսեղեն, հրեշտակներ լուսերես
 Ձեզ վաղուց եմ կորցրել որերում ցուրտ ու խավար...
 Խոհներ կան վեհ ու հպարտ՝ փորոնումներս Աստուծո,
 Վորոնք պղծված են արդեն յեվ խաղով, յեվ կեղծությամբ:
 Յեվ կան խոհներ, կին-խոհներ, փոր նայում են ծանրածոց
 Խոհներ, խոհներ կան թըզուկ — սապատավոր կորությամբ...
 Յեվ ուր ել փոր փախչեմ յես մաշված այս ուղիներում,
 Թռչում են իմ հետեւից, վազում, սողում, հետեւո՛ւմ...

Իսկ գրքերը... Բյուրեղյա ալբյուրներ իմ խնդումի,
 Ուր ցուրտ ե հարազատ յեվ մտերիմ մի յերես
 Յե՛վ ուսուցիչ, յե՛վ ընկեր, յե՛վ բաղձալի թշնամի,
 Ամեն վայելք, ամեն թույն ձեր մեջ, ձեր մեջ գտա յես.
 Աղա՛վնիներ յեղաք դուք իմ մոլորված տապանում,
 Վորպես Նոյին՝ ինձ ել դո՛ւք ավետեցիք փոր արդեն
 Պիտի գտնեմ հաստատ հող, արմավի առկ անդորր բուն,
 Վոր տաճարըս յես քարի վրա պիտի հաստատեմ...
 Պատուհաններ գրքերի, ապակիներ բազմագույն,

Հարկեցի ձեզ, նայեցի ազահությամբ անհագուրդ
 Յեւ տեսա լայն հեռուներ, ցուքեր անվերջ ու անհուն,
 Լույսեր, ձեւեր նորանոր — անթիվ փայլանք ու խորհուրդ.
 Յեւ տարորեն հարազատ — դեմք յեւ տեսիլ, յեւ անուն...
 Յեւ տարիներ մնացի կանգնած այնտեղ, վորպես խենթ
 Արեւները շլացած — յեւ կուրացաւ իմ հոգին,
 Ճառագայթներն այրեցին սիրտըս խորն ու առհավետ
 Յեւ ցնորքներըս բոլոր մոխիր դարձան, ցրվեցին...:

Ո՛ր, մոռանալ ամեն ինչ, լինել ազատ ու մենակ,
 Դաշտերի մեջ լայնարձակ յեւ լռանիստ, յեւ անդորր,
 Դնալ ճամբով մենավոր առանց իղծ ու նպատակ
 Յեւ չըհիշել, մոռանալ յեւ անցյալ, յեւ գալիք որ...
 Քաղել ծաղկունքն առանց վիշտ — կակաջների պես թեթեւ,
 Ծծել փայլեր ու ցուքեր, վորպես սերը առաջին,
 Ընկնել, մեռնել ու սուզվել, սուզվել մթնում սեվաթեւ,
 Առանց դառը խնդության զարթնել կրկին ու կրկին...

5 ՔԱՂԱՔԻՆ

ՆԵՐՈՂ

Իշխելով հովտում հաղթ ու կարող,
 Յերկինք մեխելով հուրեր բորբոք,
 Գործարանների ցից փողերով
 Շրջապատված ես դու անողոք:

Վո՛ղջ աղյուս, պողպատ յեւ ապակի,
 Փաթաթված ցանցով յերկաթալար,
 Դու հիմա անխոնջ, կախարդ վոգի,
 Դու չթուլացող մագնիս ես վառ:

Վորպես գիշատիչ վիշապ անթիվ
 Նստած տարիներն ես դու հսկում.
 Իսկ յերակներում քո յերկաթե
 Ցայտում ե գազը, ջուրը հոսում:

Յեւ քո վորկորը, միշտ անկշտում,
 Դարերի տուրբով չի հագնում.
 Չարիքն ե այնտեղ հար տրտնջում,
 Աղքատությունն ե ահեղ տնքում:

Դու հնարագետ, դու կամակոր,
 Կանգնել ես փոսկյա ապարանքներ,
 Տաճարներ յեւ պերճ, յեւ փառավոր,
 Դիզել նկարներ, կանայք, գրքեր...:

Դու, անհնազանդ, ինքդ ես կոչում
 Դեպ ապարանքը ամբոխն անքուն,
 Ու սեւ միթինգին իշխան կարգում
 Կարիք, խենթություն, ըմբոստություն...

Յեւ զիշերը յերբ լույս դահլճում
Պոռնկությունն և խենթ մեղմեւում,
Յեւ բաժակներում վառ ու փրփրուն
Յոփ վայրկյանների թույնն և յեռում,

Կորացնում եւ քո գերիններին,
Վոր մերենաներն այն դարձդարձիկ
Թափով մոլեգին, զարկով դյուրին
Կռնն սայրեր սուր յեւ ցոլացիկ . . .

Կախարդ հայացքով, նենգամիտ ոճ,
Կույր մոլեգնության ահեղ պահուն,
Դանակը՝ թունոտ յեւ մահախոց
Քո վրա ինքդ ես, ինքդ ես բաշում . .

I. Կապույտ Կույր

Կրկնական Կույր

Գրական Կույր

Կաշիկ Կույր

Так отрок Библии, безумный расточитель. . .

Пушкин

Մի՞թե անցնելով զեռերը յես,
Պիտի տեսնեմ քեզ, հայրենի տուն,
Յեւ ընկնեմ այն խենթ պատանու պես
Ամոթահար ու վշտով լեցուն:

Հալատով հարուստ հեռացա յես,
Վորպես ձկնորսն և գնում փրսի.
Սիդնում զիտուն կաճառն ու ձեզ
Տեսա պոռնիկներ նոխ Տիրոսի:

Կատարիկց իմ հին ցնորքն ու յես
Լսեցի խոսքեր զրքերից խոր,
Յեւ ճաշակեցի սեր հրակեզ,
Յեւ զգվանք անուշ ու թունավոր:

Սակայն վատնելով զանձրս բոլոր,
Ըմպելով բոլոր թույները՝ յես
Փախա դաշտերն ու անտառ խոր
Սրբապղծողի յեւ գողի պես:

Յեւ ընդունեցի, փորպես բարիք,
Յեւ փողջունեցի քեզ, մենություն.
Ու զիշերի մեջ խոր ու լոկ
Բալզամ եր արծաթ ցողն իմ հոգուն:

Յեւ յայնպէս անհա՛ս թժաց հանկարծ
Հայրենի տունըս հիվանդ սրտիս,
Յեւ ծո՛ւխը, ծո՛ւխը այն վերամբարծ
Զորացող գետի ափին հանգիստ,

Ուր իմ սրտում ել կար սրբություն
Վոսկե մանկության լուսե գրկում,
Կյանքի խրախճանք քայլով լեցուն,
Անմիտ վատնած իմ ժառանգություն:

Ո՛ր, յեթե նորից, յեթե նորից
Նայեյի շուրջըս պարզ ու խնդուն,
Անտազնա՛պ, անխոհ յեւ անթախիծ
Այրվելի բոցե ակնթարթում...

7 ՀՈՒՇԵՐԻ ԺԱՄ

Հուշերն են բնքույշ մի թախիծով
Աչքերս համբուրում: Յերեկն իրա
Անուր կոհակն ե լեցնում մի ծով.—
Ստվեր ե իջնում հոգուս վրա:

Վորպէս ծովատար նավորդ, կրկին
Տեսնում եմ ահա կյանքս բոլոր
Իր հույսերով ու վշտով մթին,
Իր խենթությամբ ու ցնորքով խոր:

Բայց մշուշելով բոլորն ու այս
Լռության մեջ խոր յեւ ահաբեր
Թեքվում են միգում ահա վրաս
Յերկու կանացի ուրվապատկեր:

Մերթ դողով տարփոտ յեւ անպատկառ
Աչքերում կրքի հուրն անհագուրդ
Դյութում են բախտի տեսիլքով վառ,
Վոր մոռացված ե որերում ցուրտ:

Յեւ մերթ նայում են սիրով մի հեզ
Սոսնց նախանձ ու անկշտամբանք —
Կորածն են սգում, լալիս՝ կարծես,
Յեւ իմ վրա, յեւ իմ տեղ — նրանք:

Յեւ նորից եմ այս վիհից խավար
Զգտում յես դեպի ափեր հեռու,
Բայց շշնջում ե մեկը համառ
Դու ինքդ ես ընտրել վիճակըդ, դո՛ւ:

Սուգվեց ցերեկը միգում անախ
Սաստող կոհակն և շուրջըս ծեծվում,
Հուշերն են քնքույշ մի թախծությամբ
Նորից դառն համբույրն ինձ մոտեցնում...

8 ՈՐՀԱՆՈՒԹՅՈՒՆ

Que tes mains soient bénies car elles sont impures !
Remy de Gourmont

Լույսը աչքերիդ որհնում եմ յես—
Ցուլաց մթնում իմ զառանցումի :

Շուրթերիդ ժրպիտն որհնում եմ յես—
Արբեցնում եր ինձ, վորպես զինի :

Համբույրներիդ թույնն որհնում եմ յես—
Թունավորեց նա յերազ ու միտք.

Գրկախառնումըդ որհնում եմ յես—
Անցյալն եր գոցում մեջըս առ միշտ :

Հուրը քո սիրո որհնում եմ յես—
Խնդուն նետվեցի խարույկի մեջ :

Հոգուդ վողջ մութը որհնում եմ յես—
Տարածեց վրաս թեկերն անվերջ :

Որհնում եմ հավետ, որհնում եմ բեզ,
Վոր բերիւ լոկ ցավ. վիշտ ու խավար,

Վոր կոչեցիր դեպ յեղեմն ու յես
Փակ դրան առաջ սառչում եմ հար...

Աղջիկ հեռու-հեռավոր,
Ննջիր լուսերես,
Ահա յերգըս մենավոր,
Մենավոր ինձ պես...

Նա՛նիկ ե, որոր-նանիկ,
Վոր հյուսել եմ յես.
Զուլել մութին այս լռիկ,
Մեղմիկ պարզել բեզ:

Արծազանքն ե սա հալվող
Անցած խոսքերի.
Յուլքն ե, ցուքը խավարող
Մեր ցնորքների:

Վորպես անկապ մի գրույց—
Լավ որերի հո՛ւշ.
Մաքուր զոհար եր ու լույս,
Ծիյաճա՛ն ու հո՛ւր...

Նիրհում ես, որո՛ր, նանիկ,
Որբանում հանդարտ.
Յեղի՛ր մեզ պես յերջանիկ
Կեթ մի ակնթարթ...

Յե՛վ հիշիր բոցն պահուն,
Յերբ սիրուց մեռնես,
Գիշերն երգող ու հնչուն
Խոսքերը մեր հեզ:

Դու իմ հեռու-հեռավոր
Նանիկ ու որոր,
Յերգն ե, մի յերգ մենավոր
Իմ սերը բոլոր...

И если страстный в час заветный
Заслышу я мой трубный звук.

Tertia Vigilia

Յեւ լսեցի քեզ, իմ փողի ձայն,
Բաղցր քնի մեջ հասար դու ինձ.
Ալկովը շքեղ յեվ դյուրթական
Շրջապատում եր ամեն կողմից:

Անցան այդ միգում, ո, չրգիտեմ,
Գուցե տարիներ, գուցե դարեր.
Տարորեն մոտ եր մի լույս յեղեմ
Յեվ հեռու՝ կյանքը աղմկաբեր:

Բայց ցնցվեցի ու յեւա հանկարծ
Փշրեցի շղթան իմ ձեռների,
Յեվ փայլակի պես իմ դեմ շողաց
Հաղթական աղմուկն այն ձայների:

Յեվ քունըս, այնքան համր ու յերկար,
Կարճատեւ թվաց յերազի պես.
Նետեցի ծածկոցն ու խելագար
Սուզվեցի որվա հուրերում յես:

Յեվ նայեցի հին պատուհանիս
Բարձրությունից այն լայն ու հստակ,
Տեսա արեւի ու յերկինքն անբիծ,
Բաղաքը, փորպես ծովի հատակ:

Յեվ ինձ տարորեն բացվեց ու նոր,
Այդ կարճ ու խնդուն ակնթարթին,
Վո՛ղջ կյանքն ամբոխի այն բյուրավոր
Հոգսերի աղբյուրն այն փրփրագին:

Հեկեկացի, վոր նորից, նորից
Բացվել ե հոգուս մի նոր աշխարհ.
Փախչում եմ շքեղ իմ ալկովից
Յեվ ազատ, յեվ մե՛րկ, յեվ խելագար...

ՇԱՐԼ ԲՈՂԼԵՐ

ՓՈՔՐԻԿ ԱՐՁԱԿ ՊՈԵՄՆԵՐ

ստեղծագործ

1924 1925 թվթ

Լ ա գ ո ի շ ի ջ ա լ

Շ ա թ ա ժ Լ ի ս ա

Կ-սեւ Լ Շ ա ղ ի ղ

Լ ա ղ ի ղ Կ ժ ղ

1. ՈՏԱՐԱԿԱՆԸ

— Ամենից շատ ո՞ւմ ես սիրում դու, ասա՛, հանելուկ-մարդ, հո՞րդ, մո՞րդ, քրո՞ջդ, թե՞ յեղբորդ:

— Յես չունեմ փոչ հայր, փոչ մայր, փոչ բույր, փոչ յեղբայր:

— Բարեկամներիդ:

— Դուք ասիք մի խոսք, փորի իմաստն ինձ անհայտ ե մինչեւ որս:

— Հայրենիքդ:

— Յես չգիտեմ, փո՛ր լալնու թշան տակ ե զանվում նա:

— Գեղեցի՞կը:

— Հաճությամբ կսիրեյի, յեթե աստվածային ու անմահ լինեիր:

— Վոսկի՞ն:

— Ատում եմ, ինչպես դուք՝ Աստծուն:

— Հապա ինչն ես սիրում դու, արտասովոր ոտաբական:

— Ամպերն եմ սիրում... ամպերը, փոր սահում են... այնտե՛ղ, բարձրո՞ւմ... այն սքանչելի ամպերը...

2. ՊԱՌԱՎԻ ՆՈՒՍԱՀԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Փոքրիկ, թորշոմած պառավը հիյացմունքից ինքն իրեն կորցրեց, յերբ տեսավ այն սիրունիկ մանկան, փորին բոլորը փայփայում էին, փորին բոլորն ուզում էին հաճոյանալ:

Սքանչելի արարած...

Պառավի նման բեկուն ե նա յեւ պառավի պես անատամ ու անմազ:

Յեւ պառավը մոտուցավ նրան սիրաշահող ժպիտը դնեմքին:

Սակայն ահաբեկված մանուկը թպրտաց, խույս տալով պառավի փաղաքշանքից յեւ տունն իր լացի աղմուկով լցրեց:

Այնժամ քարեօխրտ պառավը մեկնեց իր մշտական առանձնարանն ու այնտեղ անկյունում կուչ եկած լալիս եր ու ասում.

— Ախ, մեր ժամանակն անցել է, խեղճ պառավներիս դուր գալու ժամն անցել է արդեն: Անցել է նույն իսկ միյամիտ մանուկներին դուր գալու ժամանակը:

Յեւ մենք ահաբեկում ենք նրանց, յերբ ուզում ենք սիրել:

3. ԱՐՎԵՍՏԱԳԵՏԻ ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔԸ

Վորքան հոգեթափանց, վորքան սրտախոց ե աշնան դժգույն որերի թախծալի վախճանը, ցավի չափ թախծալի:

Դա այն հեշտաշունչ, աղոտ ու անորոշ զգացումներից է, վորոնք ուժգին են, բայց դուրս չեն ցայտում:

Յեւ միթե կա ավելի խոր խայթոց, քան անեզրության խայթոցը:

Անասելի հիյացումով հայացքդ յերկնի ու ծովի անսահման ծոցն ե սուզվում:

Ահնություն, խաղաղություն, լազուրի անգուգակա՛ն սրբություն:

Հեռածավալ հորիզոնում մի առագաստ ե որորվում:

Իր միջայնությամբ յեւ ունայնությամբ վորքան նման ե նա անամոր իմ գոյություն:

Ալիքի միյածայն մեղեդին...

Այդ բոլորի խոհերն ինձնով են լեցուն յեւ յեւ նրանց վրա յեւ խորհում: (Չե՛ վոր այդ մտորումների վեհություն մեջ յեւ-ը շատ արագ ե անհետանում:)

Նրանք խորհում են, ասի յեւ, յերաժշտորեն, պատկերավոր, առանց նրբաբանությունների, առանց սիր-լոգիզմների, առանց յեզրակացությունների:

Յեւ այս խոհերս, վոր չգիտեմ արդյոք ինձնի՞ց թե առարկաներից են բղխում, ուժգին ու արագ լարվում են յեւ ահա նեղություն յեւ ցավ ե այդ հեշտանքը յեւ իմ կսկծոտ ու լարված նյարդերն ահա դողում են յեւ սասանում են ցավագին:

Ահով ե լցնում ինձ յերկնի խորությունը, սրտմտեցնում ե ինձ նրա ականակիտ պայծառությունը:

Ահ, միթե հավիտ պետք ե տառապել կամ անվերջ փախչել գեղեցկից:

Բնություն, մշտահաղթ ախոյան, հեռացիր, թող ինձ, մի՛ փորձիր իմ տենչերն ու հպարտությունս:

Գեղեցկի ըմբռնումը մենամարտ ե, ուր դեռ չհաղթահարված՝ արվեստագետն արդեն աղաղակում ե:

4. ՀԱՆԱՔԶԻ

Ամանորի բռնկումն եր:

Յեխի ու ծյան քառսում խլրտում կյին շողուն խաղալիքներով ու քաղցրեղեններով բեռնված հազարավոր կառքեր: Ազահությունամբ ու հուսահատությունամբ լեցուն վիթխարի բաղաքի պաշտոնական ցնորումն եր դա, վոր ամենատոկուն մենակեցի միտքն իսկ կարող ե պղտորել:

Այդ աղմկալի իրարանցման ժխտում մի եշ եր-
վագում, վորին ապաշնոհի մեկը բշում եր խարազանը
ծեռին:

Յերբ եշը պիտի շրջեր մայթի անկյունը, ձեռնոցա-
վոր, սպլայած վնոցով, սիրունատես մի պարոն հա-
ղիսավոր կերպով գլուխ տվեց խղճուկ անասունին
յեվ, գլխարկը վար առնելով, ասաց. «ցանկամ ձեզ
յերջանկություն յեվ բարորություն»:

Ապա՝ գոհունակ դեմքով, դարձավ դեպի իր ընկեր-
ները, կարծես հրավիրելով, վոր խրախուսեն իր արարքը:

Եշն ուշ չդարձրեց այդ սիրուն հանաքչու վրայ յեվ
յեռանդով վագում եր այն կողմն, ուր պարտքն եր
կոչում իրեն:

Իսկ յես հանկարծ անգսպելի մի գայրույթ գգացի
դեպի այն շքեղ հիմարը, վորը կարծես կենտրոնացրել
եր իր մեջ Ֆրանսիայի բովանդակ սրամտությունը:

5. ԿՐԿՆԱԿԻ ՍԵՆՅԱԿ

Մի սենյակ, վոր յերագի յի նման, մի իրոր հո-
գեվոր սենյակ, վորի անշարժ մթնոլորտը վարդի
ու յերկնի գույների խառնուրդով ե ներկված:

Հոգիդ հեղգությամբ սուգվում ե ցավի ու ցանկու-
թյան բույրով լի այդ լողարանը: Մթնշաղային մի բան,
կապտավուն ու վարդավուն՝ ցանկասեր մի անուրջ ե
դա խավարումի ժամին:

Կարասին ճապաղ, ջլատ, նվաղուն:

Կարծես յերագում ե կարասին, կարծես բույսերի
ու հանքերի նման բնաշրջիկ մի կյանք ե վարում կա-
րասին: Պաստառներն են խոսում համր մի լեզվով՝

նման յերկնին ու ծաղիկներին, մայրամուտ արեվներին
նման:

Պատերի վրա գարշ արվեստի յեվ վոչ մի հետք,
յերբ մաքուր յերագին յեվ անխառն տպավորությանն
ես անձնատուր՝ ամեն ավարտ արվեստ՝ հայհոյություն ե:

Այստեղ նրբորեն ներդաշնակվում են չափավոր
լույսն ու բնքույշ մութը:

Մի սեղմ ու խոնավուտ անուշհոտություն ե լողում
մթնոլորտում, ուր նիրհող հոգիդ որորում են ջերմոցի
զգացումներ:

Լուսամուտի ու մահճի առաջ հորդահոս անձրևի
նման մարմաշն ե իջնում, նա ցած ե թափվում ծյունե-
ղեն ջրվեժի նման:

Յեվ մահճի վրա պառկած ե Կուռքը, յերագների
թագուհին: Բույց ինչպե՞ս ե, վոր այստեղ ե նա: Ո՞վ ե
բերել նրան վոր դյութական գորությունն ե բազ-
մեցրել նրան հեշտանքի ու ցնորքի այս գահին:

Ի՞նչ փութթ: Մի՞թե միլեվնույն չե դա: Նա այստեղ
ե յեվ յես ճանաչեցի նրան:

Ահա նրա աչքերը, վորոնց բոցը ճեղքում ե մութը,
նրա բնքույշ ու ահավոր աչքերը, վոր ճանաչեցի յես
իրենց զարհուրելի նենգությունից:

Նրանք ձգում են, նրանք գերում են, նրանք կլա-
նում են իրենց մեջ նայող խնկին: Յես անդադար
ուսումնասիրում եյի այդ յերկու սեվ աստղը, վոր
հետաքրքրություն ու զմայլանք են ներշնչում:

Արդյոք վոր բարեհոգի դեմք ե շրջապատել ինձ
այս խորհրդավորությամբ, լուությամբ, խաղաղու-
թյամբ ու բուրմունքով:

Ո՞ր յերանություն:

Այն, ինչ վոր մենք սովորաբար կյանք ենք անվա-

նում, իր յերջանկալի զեղման ժամին իսկ չի կարող հեռավոր կերպով նմանվել այն զերագույն կյանքին, վոր ճանաչեցի յես այժմ, վոր վայելում եմ ահա ըստ անուրախ, վայրկյան ան վայրկյան:

Վո՛չ, այլևս չկա ըստ, չկա այլևս վայրկյան — ժամանակը չքացել է յեվ սա յավերժությունն է, յեւրանության հավերժությունը:

Բայց ահա մի ահեղ հարված իջաւ դրանա, մի ծանր հարված ու կարծես դժոխային մի յերազ է սա. կարծես բրիչով իմ կուրծքն են ծեծում:

Յեւ ահա ներս է մտնում մի Ուրվական.

Դատական պաշտոնյա յե դա, վոր գալիս է որենքի անունով ինձ տանջելու, անարգ մի հարճ է, վոր գալիս է վողբագին աղաղակելու յեվ իր կյանքի գոհնկությունն իմ վշտին խառնելու, կամ գուցե խմբագրական մի սուրհանդակ է, վոր ձեռագրիս շարունակությունն ուղելու յե գալիս:

Դրախտային սենյակը, Կուռքը, յերագների թագուհին, Սիլֆիդը, ինչպէս կասեր մեծ Ռըննն, ամբողջ մոգությունը չքացաւ ուրվականի մի վայրի հարվածով:

Սոսկում... Յես ուշքի յեկա, մտաբերեցի, այո՛, աղտեղի այս խուցը, դժոխային տաղտկության բնական վայրն է սա, յեվ դա իմ բնակարանն է:

Ահա անմիտ կարասին՝ փոշեպատ, կոտրտված, վառարանա անբոց ու անկայծ, թքոտ ու մրոտ, ահա տրտում լուսամուտներս, ուր անձրեմն ալոսներ է գծել փոշեպատ ապակիների վրա, ահա խզրզած, թափթփված ձեռագիրներս, ահա որացույցը, ուր մատիտով նշանված են պայմանված, չարագույժ որերը:

Յեւ անդրաշխարհային այն բուրմուկը, վորով յես

արբում եչի այնքան նրբագգած, ավա՛ղ, փոխվել յեվ ծխախոտի յեւ ինչ վոր զարշնլի բորբոսի խառնուրդ հոտի:

Մի ծթած ավերմունքի շունչ է փչում այստեղ:

Այս նեղ, բայց տաղտկաշատ աշխարհում լոկ մի բան կա, վոր զիտե ինձ ժպտալ, դա լավիշտոնի սրվակն է, վաղեմի ու սոսկալի մի բարեկամ, վորն ինչպես յեւ բոլոր բարեկամները, ախ՛ղ, բեղուն է թե՛ սիրով, թե՛ դավաճանությամբ:

Վո՛հ, դարձաւ ժամանակը. նա վերստին իշխում է յեւ այդ զագրելի ծերուկի հետ յեկաւ նրա գիւլային ամբողջ շքախումբը՝ Յուշ, Ախսոսանք, Հառաչ, Ահ, Անձկություն, Կոշմար, Յասում, Զլախտ:

Հիրավի, վոր վայրկյաններն այժմ ավալի աղմկալի յեւ հանդիսավոր են խիում, յեւ նրանցից ամեն մեկը ժամացույցից դուրս է թռչում ու ճչում՝ «յես եմ կյանքը, անտանելի, անողորմ կյանքը»:

Յեւ մարդկային կյանքում չկա յեւ վոչ մի վայկյան, վոր ավետիք բերելու կոչումն ունենար, այն ավետիքը, վոր բոլորին անասելի զարհուրանք է ներշնչում:

Այո՛, ժամանակն իշխում է, նա կրկին տեր է իր կոպիտ բռնությամբ:

Յեւ նա իր կրկնակի խթանով առաջ է մղում ինձ, վորպես մի յեզի՝ «հո՛, անասուն, բրտնի՛ր, ստրուկ, անգրի՛ր, նզովյալ»:

6. ՄԱՐԴՈՒՆ ՄԻ ՔԻՄԵՐ

Անհուն ու գորշ յերկնի տակ, լայնածավալ ու փոշեղից մի դաշտում, ուր վոչ ճանապարհ կար, վո՛չ կանաչ, վո՛չ փուշ, վո՛չ յեղիճ՝ հանդիպեցի յես մարդ-

կանց մի խումն բազմութեան, վոր կորաքամակ առաջ եր շարժվում:

Մարդկանցից ամեն մեկը տանում եր իր ուսին վիթխարի մի բիմեր, ծանր, վորպես ալյուրով կամ քարածուխով լի մի պարկ, կամ վորպես հոռմեյական հետեւիակի սպառազինութիւն:

Բայց այլանդակ այդ հրեշը լոկ անշարժ ու անկենդան բեռ չեր—նա փաթաթվում եր ու ճնշում մարդուն իր առածգական ու զորավոր մկաններով: Իր զույգ, լայն ճանկերով կպել եր նա իրեն կրողի լանջին յեւ իր առասպելական գլուխը կրողի ուսերից վեր եր բարձրացնում, վորպես այն սոսկալի սաղափարդը, վորով հնադարյան զինվորները սարսափ էլին ուզում ներշնչել իրենց թշնամիներին:

Յնա դիմեցի այդ մարդկանցից մեկին ու հարցրի, թե ուր են գնում իրենք: Նա պատասխանեց, վոր իրենք փոխին չգիտեն՝ վո՛չ ինքը, վո՛չ մյուսները, բայց վոր, ըստ յերեւոյթին, նրանք մի տեղ գնում են, քանի վոր նրանց առաջ ե մղում անհաղթ մի զորութիւն:

Ձարմանք, վոր այդ ճամբորդներից յեւ վոչ մեկը դժգոհութիւն չեր արտայայտում այն ահռելի կենդանու դեմ, վոր կախվել եր նրանց վզից, կպել նրանց մեջքին—ասես թե իրենց էյութեան մի մասը լիներ:

Այդ հոգնած ու լուրջ դեմքերից վոչ մեկի վրա չկար վհատութեան վորեւմ նշույլ:

Յերկնի թախծալի կամարի տակ, փոքրերը փոշում թաղած՝ գնում էին նրանք, այդ յերկնի նման ամայի յերկրում, գնում էին խոնարհ, հավիտյան հուսալու դատապարտվածների նման:

Յեւ նրանց բազմութիւնն անցավ իմ մոտով ու կորավ հեռավոր հորիզոնում, այնտեղ, ուր յերկրի մա-

կերելութը կորանում ե յեւ խուսափում մարդու հետաքրքիր հայացքից:

Մի պահ ճգնեցի յես պարզել ու ըմբռնել այդ հանելուկը, բայց ահա անդիմադրելի անտարբերութիւնն իջավ վրաս ու ճնշեց ինձ իր ծանրութեան տակ առավել, քան այն մարդկանց էյին ճնշում իրենց Բիմերները:

7 ԽԵՆԹՆ ՈՒ ՎԵՆԵՐԱՆ

Ի՛նչ գմայելի որ ե... Ահագին պուրակը թալկանում ե վառվռուն շողերի տակ, վորպես պատանութիւնն ե թալկանում Սիրո տիրապետութեան ներքո:

Ամեն ինչ եքստազի մեջ ե, բայց դա անհնչյուն մի եքստազ ե: Ջրերն իսկ կարծես նիրհում են: Դա լինի մի որգիյա յե, վոր բնավ նման չե մարդկանց աղմկալի խնձույթներին:

Թվում ե թե լույսը քանի գնում, ավելի ու ավելի առատ ե սկսում թափվել յեւ քանի գնում, ավելի պայծառ են ցոլում իրերը, վոր արբած ծաղիկները ցոլում են ու իրենց բազմափայլ յերանգներով լազուրի փայլի հետ մրցել են ուզում յեւ կարծես ջերմութիւնից տեսանելի յեն դարձել նրանց բույրերը, վոր ծուխերի նման դեպի աստղերն են բարձրանում:

Բայց ընդհանուր այս բերկրանքի մեջ յես ցավազար մի էյակ նշմարեցի: Հսկայական վեներայի տակ կանգնած եր մեկն ապուշ ձեւացնողներից, մեկը նրանցից, վորոնք հանձնառու յեն լինում զվարճացնելու թազավորներին, յերբ սրանց ճնշում ե Զղջում կամ Թախիծ:

Փայլուն ու ծաղրաշարժ հագուստով, զլուխը յեղջյուրներով ու բոժոժներով զարդարած, նա կուչեր յեկեղ արծանի պատվանդանի առաջ արտասովալից աչքերն անմահ Դիցուհուն հառած:

Յեւ արդ աչքերն ասում են.— յես մարդկանց մեջ ամենահետինն եմ յեւ ամենից մենաւորը, զրկված սիրուց ու բարեկամությունից յեւ ավելի թշվառ, բան ամենավորորմնի անասունը. բայց յես եւ ստեղծված եմ անմահ Դեղեցիկն զգալու յեւ ըմբռնելու: Ահ, Դիցուհի, զթա վշտիս, ցավագին ցնորքիս:

Սակայն անողոր Վեներան իր մարմար հայացքը ուղղել եր չգիտեմ դեպի ուր:

8 ՇՈՒՆՆ ՈՒ ՍՐՎԱԿԸ

Իմ սիրուն շուն, բարի շունս, մոտիկ յեկ, հոտ բաշիր այս անուշահոտ ջրից, վորը քաղաքիս ամենապատվական պարփյումներից եմ գնել:

Յեւ շունը պոչը թափ տալով, վոր ըստ իս այդ թշվառ արարածների ծիծաղի կամ ժպիտի նշանն է, մոտեցավ ու իր խոնավ դունչը հետաքրքրությամբ հպեց սրվակի բերնին, ապա հանկարծ ահով հետ-հետ բաշվեց ու սկսեց վրաս հաջել, ասես թե կշտամբելիս լիներ ինձ:

Ահ, թշվառական շուն, յեթե յես ձեզ մի կույտ աղբ առաջարկեյի, դուք հաճույքով պիտի հոտոտեյիք այն, անգամ գուցե խժռեյիք այն:

Այդպես է, իմ տխուր կյանքի ուղեկից, դուք նման եք հասարակության, վորին պետք չե բնավ նուրբ անուշահոտություն առաջարկել, դա նրան նեղացնում է. այլ լոկ խնամքով հավաքած աղտեղություններ:

9 ՎԱՏ ԱՊԱԿԵԳՈՐԾ

Կան զուտ մտահայաց բնավորություններ, գործողության բոլորովին անընդունակ, վորոնք սակայն յերբեմն մի անըմբռնելի ու խորհրդավոր դրդումով գործում են այնպիսի արագությամբ, վորին իրենք իրենց անընդունակ եյին համարելու:

Նա, վոր դոնապանից վշտաբեր մի բոթ լսելու ահից շրջում է դրան առաջն ու չի վստահանում ներս մտնել, նա, վոր յերկու շաբաթ պահում է նամակն առանց բաց անելու, կամ միայն կես տարի անց է ձեռնարկում այն գործին, վորի անհրաժեշտությունը դեռ մի տարի առաջ պարզ եր, զգում է հանկարծ, վոր մի բան իրեն մղում է դեպի գործ, վորպես աղեղն է մղում նետին:

Մորալիստն ու բժիշկը, վոր ամենագետ լինելու հավակնությունն ունեն, չեն կարող բացատրել, թե վորտեղից է ծագում այդ հանկարծական յեռանդը ծույլ ու հեշտասեր հոգիներում յեւ նրանք, վոր ամենասովորական ու անհրաժեշտ գործի անընդունակ եյին, հանկարծ մի վայրկյան հոգեկան ույժ են ստանում ամենաանմիտ, անգամ վտանգավոր վարմունքների համար:

Իմ բարեկամներից մեկը, մի խաղաղ ու յերազող մարդ, հրդեհեղ եր մի անգամ անտառը, վորպես գի, ինչպես ինքն եր ասում, տեսնի, թե արդյոք իրավ կրակն այնքան հեշտ է տարածվում, ինչպես սովորաբար պնդում են: Տասն անգամ իրար հետեւից նրա փորձը չեւ աջողվել, բայց ասանմեկ անգամին ավելի բան աջողվեց:

Մի ուրիշն իր սիգարը վառողի տակառի մտ

կլառի, վոր տեսնի, իմանա, փորձի ճակատագիրը՝
վոր ստիպի ինքն իրեն ստուգելու իր արիւթթյունը,
վերջապէս խաղի համար, անհանգստութեան քաղցրու-
թյունն զգալու համար կամ պարագլուխութիւնից:

Դա յեռանդի այն տեսակն է, վոր ձանձորութիւն
ու ցնորամտութիւնից է բղխում, յեղ նրանք, ում
մեջ նա համառորեն և արտահայտւում, ինչպէս ասի,
սովորաբար ամենաանհոգ ու յերազուն արարած-
ներն են:

Յեւ մի ուրիշը, վոր վեհերոտութիւնից մարդկանց
հայացքի դեմ աչքերը խոնարհում է, վոր իր թույլ
կամքի բոլոր ուժը պիտի հաւաքի, վորպէս զի կա՛ն
մտնի կամ թատրոն, վորի մուտքի մոտ կանգնած
տոմսառուն թվում է նրան Մինոսի, Եյսկոսի յեղ
Ռադամանտի վեհութեամբ զգեցած, անապասելի կերպով
կարող է իր կողքովն անցնող մի ծերուկի վզովն
ընկնել ու հիւսացած պաչպչել նրան ապշած ամբոխի
առջեւ:

Ինչո՞ւ: Նրա համար... Նրա համար, վոր այդ
դեմքը նրան անհաղթելի մի համակրանք է ներշնչել,
կամ գո՛ւցե ավելի երջա կլինի յենթադրել, վոր նա
ինքն ել չգիտե՝ ինչո՞ւ:

Քանի՜ անգամ եմ գոհ դարձել յես այդ դրդմանը,
այդ յուզիչ, վոր իրավունք է տալիս մեզ կարծելու,
վոր չարանենգ դեմքերը ներս են սողում մեր մեջ յեղ
ստիպում են մեզ առանց մեր գիտութեան իրենց
ամենաանհեթեթ կամքը կատարելու:

Մի առաւիտ յես արթնացա մռայլ տրտում,
պարագլուխութիւնից հոգնած յեղ, ինձ թվում էր, տրա-
մադիր մի մեծ բան, մի փսեմ գործ անելու, բայց
ավա՛ղ, յես բաց արի պատուհանս:

(Նկատեցիք, խնդրեմ, վոր միտիֆիկացիայի վոգին,
վորն արարածներից վոմանց մեջ աշխատութեան ու
հնարագիտութեան արդյունք չէ, այլ հանկարծակի մի
ներշնչում, իր ջերմագին մղումով շատ նման է այն
դրութեան, վոր բժիշկները հիստերիկ են կոչում, իսկ
բժիշկներից բիչ ավելի խելացի մտածողները՝ սատա-
նական, այն դրութեան, վոր մղում է մեզ՝ առանց մեր
կողմից դիմադրութեան հանդիպելու՝ դեպի մի շարք
վտանգավոր ու անվայել վարմունքներ):

Առաջին մարդը, վորին յես նկատեցի փողոցում,
դա ապակեգործն էր, վորի խլացնող ու աններդաշնակ
եղիչ հասալ ինձ Փարիզի ծանր ու աղտոտ մթնոլորտի
միջից: Սակայն յես չեմ կարող ասել, թե ինչու ինձ
մի հանկարծակի ու բռնակալ ատելութիւն տիրեց
դեպի այդ խեղճ մարդը:

— Ե՛յ, ե՛յ, վեր կանչեցի յես նրան:

Մինչդեռ ինքս ուրախութեամբ մտածում եյի, վոր
սենյակս վեցերորդ հարկումն է, իսկ սանդուխն այնքան
նեղ, վոր այդ մարդը բավական չարչարանք պիտի
կրի, վորպէս զի վեր բարձրանա, իր փխրուն բեռի
անկյունները շարունակ պատերին խփելով:

Վերջապէս նա յեկավ:

Յես հետաքրքրութեամբ գննեցի նրա բոլոր ապա-
կիներն ու ասացի

— Ինչպե՞ս, դուք չունեք գունավոր ապակիներ՝
վարդագույն, կարմիր, կապույտ, կախարդական,
դրսխտային ապակիներ: Վորքա՞ն անամոթ եր դուք:
Յեւ դուք համարձակւում եք շրջել խեղճների փողոց-
ներում, յերբ չունեք ապակիներ, վոր կյանքն ավելի
գեղեցիկ ցույց տան... Յես արագ ցած հրեցի նրան

սանդուխից յեւ Նա մըթմըթալով ու քնթարելով իջաւ ներքեւ:

Յես պատշգամբ յեւա, վերցրի փոքրիկ կավե ծաղկամանը յեւ յորք ապակեգործը յերեւաց դրան մոտ, ուղիղ ցած նետեցի կավե ոււմբս, վոր նրա շալկոցի ծայրին դիպաւ: Հարկածս վայր գլորեց նրան ու իր թիկունքի տակ փշուր-փշուր արեց նրա ամբողջ աղբատիկ կարողութիւնը, վոր ցանուցիր յեղաւ խւացոցիչ աղմուկով՝ նման բյուրեղյա ապարանքի, վոր փշրվում ե կայծակի հարվածից:

— Կյանքը գեղեցիկ, գեղեցիկ թող յերեւա կյանքը:

Բայց այդ նյարդային կատակներն անվտանգ չեն յեւ հաճախ աժան չեն նստում: Սակայն փուլթ չե հավերժական անեծքը նրանց համար, ով մի ակնթարթում գտնում ե վայելքի համայն անեզրութիւնը:

10 ԳԻՇԵՐՎԱ ՄԵԿ ԺԱՄԻՆ

Վերջապես մենակ եմ: Ձի լսվում փոչինչ, բացի փողոցով մերթ ընդ մերթ անցնող ուշացած ու հոգնած կառքերի դղրոյունը:

Վերջապես կարող եմ յես այժմ մի քանի ժամ յեթե փոչ՝ հանգստութիւն, գեթ խաղաղութիւն վայելել:

Ձբացաւ վերջապես մարդկային դեմքի բռնութիւնը յեւ յեթե պիտի տանջվեմ, ինքս ինձ կտանջեմ:

Վերջապես կարող եմ յես խաւարի ավազանն ընկղմվել:

Բայց նախ բանալիի յերկու պտույտ փականքում:

Ինձ թվում ե, վոր բանալիի այդ յերկու պտույտը

մենութիւնս կավեւացնեն յեւ կամրապնդեն ինձ աշխարհից բաժանող պատնէշները:

Սոսկալի կյանք, սոսկալի քաղաք:

Մտաբերենք մեր անց կացրած որը:

Տեսնվեցի մի շարք զբաղանքների հետ, վորոնցից մեկն ինձ հարց տվեց, թե կարելի՞ յե արդյոք ցամաքով Ռուսիյա գնալ (յերեւի Նա կարծում ե, վոր Ռուսիյան կղզի յե): Ապա՝ յես համարձակ վիճում եյի մի խմբագրի հետ, վոր ամեն մի առարկութեանս պատասխանում եր, թե իրենց խմբագրութիւնը ազնիւ մարդկանց խմբակցութիւն ե, յերեւի ակնարկելով, վոր մյուս թերթերի խմբագիրները խաբեբաներ են: Բարեկեցի յես մի քսան մարդու, վորոնցից տասնհինգն ինձ անձանոթ եյին: Սեղմեցի նույնքան ձեռք, առանց նախորդ զուշութեան համար ձեռնոց անցնելու: Յերբ անձրեւ եր, ժամանակ վատնելու համար գնացի մի կաքավչուհու մոտ, վորը խնդրեց ինձ, վոր իր համար նկարեմ «Վենյուստրայի» զգեստը: Ապա՝ մի թատրոնի դիրեկտորի հետքից եյի ընկել յեւ Նա ինձ ճանապարհ դրեց հետեւյալ խոսքերով. «Ինձ մնա՝ լավ կանեք, վոր դիմեք Շ-ին, դա իմ հեղինակներից ամենաձանձրալին, ամենահիմարն ու ամենահոգակաւորն ե, գուցե նրա հետ մի բան գլուխ բերեք: Տեսնվեցեք նրա հետ, ապա յեկեք՝ կնայեք»: Յես պարծենում եյի (ինչո՞ւ) շատ տգեղ արարքներով, վոր բնաւ չեյի կատարել յեւ վատորեն ժխտում մի քանի փոքրիկ կեղտոտութիւններ, վոր կատանել եյի ուրախութեամբ անձնագովութեան տենչից կամ ակնածելով մարդկանց դատաստանից: Բարեկամներիցս մեկին մերժեցի մի չնչին ծառայութիւն, մինչդեռ յերաշխաւոր յեղա մի կատարյալ խաբեբայի համար: Ո՛ւֆ:

Մի՞թե սա յե բոլորը :

Դժգոհ ամենքից յեւ ինքս ինձնից՝ ինչպե՞ս կուզեյի յես մի փոքր մաքրվել, հոգով վերանալ գիշերի այս մենավոր խաղաղության ու լուսության մեջ : Դուք, իմ սիրած մարդկանց հոգիներ, ում յես յերգել եմ, ոգնեցե՛ք ինձ, վանեցե՛ք ինձնից ստությունը, ապականիչ գոլորշիները :

Յեւ դու, Տեր Աստված, վողորմի՛ր ինձ, թույլ տուր, վոր գրեմ մի քանի գեղեցիկ վոտանավորներ, վորոնցից յերեւա վոր յես աշխարհիս ամենահետին մարդը չեմ, վոր յես ավելի ստոր չեմ, քան նրանք, վորոնց արհամարհում եմ յես :

11 ԱՍՏՈՒՆԸ

Ամեն մարդ ընդունակ չե ամբոխի ավազանում լողալու : Ամբոխից վայելք չահելն եւ մի արվեստ ե : Յեւ մարդկային ցեղն իր համար վայելքի աղբյուր կարող ե դարձնել միայն նա, ում դեռ որորոցում ինչ վոր ֆեյա ներշնչել ե ճաշակ դեպի կերպարանափոխությունն ու դիմակը, զգվանք՝ դեպի տնակեցությունն ու սեր՝ դեպի ճանապարհորդությունը :

Ամբոխ, մենություն — սոքա հոմանիշ յեւ մեկը մյուսին փոխարկող բառեր են գործունյա յեւ բեղմնավոր պոետի համար : Ով չի կարող մարդաշատ դարձնել իր առանձնությունը, չի կարող յեւ մենակ լինել ունայնահոգ ամբոխի մեջ :

Պոետն այն անհամեմատ մենարտոնությունն ունի, վոր ըստ իր ցանկություն կարող ե լինել ինքն ինքը յեւ մի այլ վոր : Նման մոլոր հոգիներին, վոր իրենց համար մարմին են վորոնում, պոետը մտնում ե, յերբ

կամենա, ամեն մի անձի մեջ : Միայն պոետի առաջ բաց ե ամեն ինչ, իսկ յերբ թվում ե, թե մի տեղ փակ ե նրա համար, դա նշանակում ե, վոր պոետը այդ տեղն այցելելը հետաքրքրական չի տեսնում :

Մենակ ու մտախոհ ենմելով, պոետն անգուգական արբեցում ե գգում այդ ընդհանրական հաղորդակցության մեջ : Նա, ով դյուրությամբ կարողանում ե խառնվել ամբոխին, գիտե այնպիսի տենդագին վայելքներ, վորոնցից հավետ գուրկ ե անդուկի պես փակված եգոյիստը յեւ վորդի նման իր կեղեվում ամփոփված պարապորդը : Ընդունում ե պոետն իբր իրենը ամեն մի արհեստ, ամեն խնդում յեւ ամեն վիշտ, վոր բերում ե նրան պատահարը :

Այն, ինչ մարդիկ սեր են կոչում, շատ ե փոքր, չնչին ու չափավոր համեմատած այդ որգիչայի հետ, այդ սուրբ պոռնկություն հետ հոգու, վորն անձնատուր ե լինում լիովին՝ համայն ջերմություն, համայն պոեզիայ՝ իր առաջ բացվող անակնկալին, անհայտին, անցողիկին :

Պետք ե յերբեմն հիշեցնել աշխարհի յերջանիկներին, գեթ նրանց հիմար գոռոզությունը խոնարհեցնելու համար, վոր կա յերջանկություն ավելի բարձր, քան նրանցն ե, ավելի նուրբ ու լայնածիր :

Գաղութների հիմնադիրները, ժողովրդի հովիվները, միսիյոնար քահանաները, վոր նետված են աշխարհի ծայրը, անշուշտ, մասամբ ծանոթ են այդ խորհրդավոր արբեցումներին յեւ այն ընդարձակ ընտանիքում, վոր իրենց հանճարի գորությունը ե ստեղծված, նրանք յերբեմն պիտի ծիծաղեն այն մարդկանց վրա, վորոնք իրենց խղճում են իրենց վիճակի համար՝ այնքան խռովահույզ յեւ իրենց կյանքի համար՝ այնքան վողջախոհ :

Վտվենարգն ասում ե, վոր հասարակական այգիներում կան ծառուղիներ, վորոնց այցելուներն առավելապես հուսախաբ փառամոլներն են, գյուտ անելու տենչով բռնված անաջողակները, փառքի խորթ զավակները, կոտորված սրտերը, բոլոր խոտովահույզ ու գոցված հոգիները, վորոնց մեջ դեռ վորոտում են փոթորկի վերջին հառաչները յեւ վորոնք խուսափում են զվարթ ու պարապ մարդկանց լսիրշ հայացքներից:

Այդ զուլալից առանձնարանները հանդիպումի վայր են բոլոր նրանց համար, ում կյանքը հաշմեցրել ե: Դա այն վայրն ե, ուր պոետներն ու փիլիսոփաները սիրում են ուղղել իրենց անհագ ակնկալությունը: Յեւ այդտեղ ե, վոր նրանց համար կա սնունդ: Վորովհետեւ յեթե կա մի տեղ, վորն այցելելուց նրանք խորշում են, ինչպես յես արդեն նկատել եմ, դա ունեւորների ճոխությունն ե: Դրանց աղմկալի յեւ ունայն շփոթը գրավություն չունի նրանց համար: Ընդհակառակը՝ նրանք անդիմադրելի կերպով ձգտում են դեպի այն ամենը, ինչ տկար ե, ավերակ, վշտալից, վո՛րբ:

Փորձված աչքն այնտեղ բնավ չի սխալվի: Այդ քարացած, մաշված դեմքերին, այդ խորն ընկած ու անփայլ, կամ կուլի վերջին բոցով փայլող աչքերում, այդ խոր ու բազմաթիվ կնճիւններում, այդ քայլվածներում՝ մերթ այնքան դանդաղ, մերթ ցնցալից՝ նա իսկույն կկարդա անթիվ լեզենդներ խաբված սիրո, մերժված նվիրաբերության, անփոխադարձ տենչերի, կտեսնի քաղցի ու ցրտի անձայն ու խոնարհ տարված բնուր: Նկատե՛լ եք դուք յերբեվիցս այրիներին այդ

մենավորիկ նստարանների վրա, խեղճ այրիներին: Սգազգեստով են նրանք թե վոչ, դա միջնվտոյն ե, շատ հեշտ ե նրանց ճանաչելը: Ջրավորի սգազգեստում միշտ մի բան պակաս ե լինում յեւ ներդաշնակության բացակայությունը նրան ավելի խղճալի յե դարձնում: Նա ստիպված ե վշտի համար իսկ խնայող լինել, մինչդեռ հարուստն իր սուգը կրում ե ամենայն ճոխություն:

Այրիներից վո՞րն ե արդյոք ավելի տրտում ու կարեկցություն շարժող.— նա՛, վոր ձեռքից բռնած տանում ե մանկան, վորին անկարող ե հաղորդել իր յերազները, թե՛ նա, վոր բոլորովին միայնակ ե: Չգիտեմ... Մի անգամ յես յերկար ժամեր հետեւում եյի այդպիսի մի թախծավոր պառավ կնոջ, ցցված, ասես թե սառած լինեք նա, փաթաթվել եր փոքրիկ շալով յեւ ստոյիկյան սիգանք եր արտահայտում:

Ըստ յերեւոյթին, կատարյալ մենությունը հաղորդել եր նրան ամուրիի շարժուձեւով, վորին միջանում եր նրա առնական բնույթը, վոր առանձին մի գրավություն ու խորհրդավորություն եր տալիս իր խառաբարո կեցվածին:

Չգիտեմ, վո՞ր վուրմեղի կափեյում յեւ ինչպե՞ս եր նախաճաշել նա:

Յես հետեւիցի նրան մինչեւ ընթերցարան ու հետը ներս մտնելով, յերկար դիտում եյի, թե ինչպես նա իր յերբեմնի արցունքից այրված աչքերով լրագրում ինչ վոր ըստ յերեւոյթի իր համար շատ կարեւոր տեղեկություն եր վորոնում:

Ապա՛ կեսորից հետո, աշնանային գեղեցիկ յերկնի տակ, այն յերկնի տակ, ուր յերամով իջնում են մեր վրա հուշերն ու գղջումները, նստեց նա այգու անկյու-

նում, վոր ամբոխից հեռու ականջ դնի այն համերգ-
ներից մեկին. վորոնցով զինվորական նվագախումբը
հյուրասիրում է Փարիզի ժողովրդին:

Անշուշտ դա մի փոքրիկ խրախճան էր այդ անմեղ
(կամ այդ մաքրված) պառավի համար յեւ դա մի
սփոփանք է, վորին նա արժանանում է, անց կացնելով
իր ծանր ու յերկար որերից մեկը առանց մտերմի,
առանց զրույցի, առանց խնդության, մեկն այն որերից,
վոր Աստված ուղարկում է նրան գուցե արդեն
յերկար տարիներ իրար հետեւից տարին յերեքհարյուր
վաթսուն յեւ հինգ անգամ:

Ահա մի ուրիշը:

Յես չեմ կարողանում հայացքս չնետել, յեթե վոչ
կատարյալ կարեկցությամբ՝ գեթ հետաքրքրությամբ,
դեպի զրկվածների այն ամբոխը, վոր հասարակական
համերգների ժամին խոնվում է պարիսպների շուրջը:

Որքեստրը նստում է դեպի գիշերային խավարը
ցնծության, հեշտանքի յեւ հաղթանակի հնչյուններ:
Հայելիների մեջ ցլում են զգեստները, հայացքները
իրար են հանդիպում, անգործութունից հոգնած
պարապորդները շրջում են յեւ այնպես են ձեւացնում,
իրր թե անհոգ ծուլությամբ յերաժշտություն են
լում: Վողջը հարստություն է յեւ յերջանկություն,
չկա վոչինչ, վոր կյանքի վայելքին անձնատուր լինելու
ցնծագին անհոգությամբ չշնչի, բացի այն սեւ ամբոխից,
վոր շրջապատել է ցանկապատն ու խլում է բամու
հնչյունները. դիտելով ներսի հրավառ հնոցը:

Միշտ հետաքրքրական է նայել, թե ինչպես է
արտացոլում հարուստի ուրախությունն աղքատի
աչքերի խորքում: Բայց այսոր այդ բլուզ ու չիթ
հագած ամբոխի մեջ յես նկատեցի մի եյակ, վորի

ազնվությունը շրջապատի գոհակության փայլուն
հակապատկերն էր:

Դա բարձրահասակ, վեհաշուք մի կին էր յեւ իր
բովանդակ տեսնն այնպիսի մի ազնվություն էր
արտահայտում, վորպիսին յես չեմ հիշում, վոր տեսած
լինեմ անգամ անցյալի ազնվագարմ գեղունիների
շարքում:

Նրա վողջ անձնավորությունը գոռոզ առաքինու-
թյան կնիքն էր կրում: Նրա տրտում ու վտիտ դեմքը
միջանգամայն համապատասխան էր իր հագի սգահան-
դերծին: Նա յեւս վորպես այն ամբոխը, վորին նա
խառնվել էր, ներս էր նայում խոր հայացքով դեպի
լուսավառ աշխարհը յեւ դանդաղ որորում էր գլուխը:

Անգուգակա՛ն տեսիլ: «Անտարակույս, ասի ինքս
ինձ, այդ չքավորության մեջ անգամ, յեթե կա այդտեղ
չքա խորություն, չպետք է թույլատրել այդորինակ
զազիր խնայողություն. ապա ուրեմն ինչո՞ւ յե կամավ
մնում այդ շրջանում, ուր նա ցլում է, վորպես
պայծառ մի բիծ»:

Սակայն, յերբ հետաքրքիր անցա յես նրա մոտով,
ինձ թվաց, վոր գտա դրա պատճառը: Բարձրահասակ
այրին բռնել էր իր նույնպես սեւագգեստ մանկան
ծեռքից: Վորբան յեւ բիչ լինել մուտքի վճարը, սակայն
չե՞ վոր այդ փողով կարելի յեր հոգալ այդ մանկան
վորեւի կարիքը, կամ թեկուզ կատարել նրա բմահա-
նույքը, ծախսել այդ փողը մի խաղալիքի վրա:

Յեւ նա վոտով պիտի դառնա տուն, անձնատուր
իր խոհերին ու յերագներին, մենակ, միշտ մենակ:
Վորովհետեւ մանուկը չար է յեւ յեսական, կոպիտ
ու անհամբեր, յեւ կինն անկարող է մտերմաբար
հաղորդել նրան իր վիշտը գեթ այնպես, ինչպես մի
կենդանու՝ մի շան կամ մի կատվի:

Յես ճանապարհորդում եյի:

Մի հափշտակիչ վեհութուն յեւ ազնվութուն կար շրջապատող տեսարանում:

Անշուշտ դրանից մի նշույլ յեւ իմ հոգու խորքը թափանցեց այդ վայրկյանին: Մտքերս սափառնում եյին ողային թեթևությամբ, գռնհիկ կրքերը, ատելութունն ու անմաքուր սերն այդ վայրկյանին ինձ նույնքան հեռու յեյի թվում, փորքան յեւ այն ամպերը, փոր անցնում եյին անդունդի մեջ, իմ փոքրերի տակ: Թվում եր ինձ, փոր հոգիս նույնքան մաքուր ե յեւ լայն, փորքան յերկնի կամարը, փոր տարածվում եր գլխիս վերեւը: Յերկրային հուշերը հասնում եյին սրտիս մեղմացած յեւ նրբացած, փորպես հեռվում, շատ հեռվում, մի ուրիշ սարի լանջին արածող հոտի բոժոժների հնչյունը: Փոքրիկ, անշարժ յեւ իր անչափ խորութունից սեւ լճակի վրայով մերթ ընդ մերթ սահում եր ամպի մի ստվեր, փորպես յերկնում սափառնող ողային հսկայի ծածկույթի մի ցոլացում: Յեւ, յիշում եմ, այն հանդիսավոր ու հազվադեպ տպավորությունը, փոր գործում եր այդ հսկայական, բայց անծայն շարժումը, լի բերկրությամբ ու ուժով: Մեկ խոսքով՝ շնորհիվ այն հոգեցունց գեղեցկության, փորով շրջապատված եյի, յես ինձ հաշտ եյի զգում թե ինքս ինձ, թե տիեզերքի հետ: Յես նույն իսկ կարծում եմ, փոր այդ կատարյալ յերանության ու յերկրային չարիքի մոռացության մեջ հասել եյի այնտեղ, փոր պատրաստ եյի ծիծաղելի չհամարել այն լրագիրները, փորոնք պնդում են, փոր իբր թե մարդը բարի յե ծնվում:

Բայց ահա անբուժելի մատերյան վերսկսեց իր պահանջները յեւ յես մտադրվեցի հանգստանալ յեւ հագեցնել յերկար վերելքից առաջացած ախորժակս: Հանեցի գրպանիցս հացի մի մեծ կտոր, կաշվե թասս յեւ սրվակը լիքը հանրածանոթ այն ելեքսիրով, փոր դեղագործները այն ժամանակ ծախում եյին տուրխառներին հարկ յեղած դեպքում ձյունաջրին խառնելու համար:

Հանգիստ նստած հացս եյի կտրում, փոր թեթևի մի շրշյուն ստիպեց աչքերս վեր բարձրացնել: Առջևս կանգնած եր մի փոքրիկ եյակ. ցնցոտիներ հագած, սեւ ու զգգված յեւ իր խոր ընկած աչքերը վայրագ ու աղերսագին հացիս հառած: Յեւ յես լսեցի խուպոտ ու հաստածայն մի հառաչ յեւ մի բառ. կարկանդակ: Չկարողացա ծիծաղս զսպել, լսելով այդ անունը, փորով նա պատվեց իմ կիսասպիտակ հացը, փորից կտրեցի մի մեծ կտոր ու առաջարկեցի նրան: Նա դանդաղ մոտեցավ, աչքերը շարունակ հացիս հառած, ապա՝ աին առավ հացիս կտորն ու փութկոտությամբ հետ բաշվեց, կարծես վախենալով, փոր մի գուցե իմ առաջարկն անկեղծ չե, կամ յես արդեն զղջացել եմ, փոր առաջարկեցի:

Բայց նույն վայրկյանին նրան գետին գլորեց մի ալ փոքրիկ վայրենի, փորը չգիտեմ փորտեղից դուրս պրծավ: Սա այնքան նման եր առաջինին, փոր նրանց արյունակից յեղբայրներ կարելի յեր համարել:

Նրանք թափալվում եյին գետնի վրա, մրցելով թանգագին ալարի համար, փորը նրանցից փոչ մեկը չեր կամենում կիսել իր յեղբոր հետ:

Առաջինը սրտմտած ճանկեց յերկրորդի մազերն, իսկ վերջինը՝ սրա ականջը կծեց յեւ նրա կտորն

խակուն դուրս նետեց իր բերնից արյունախառն թքի հետ: «Կարկանդակի» որին աշխարհը փորձեց իր փորրիկ ճանկը հափշտակչի աչքը խրել, մինչդեռ մյուսը նգնում եր մի ձեռքով խեղդել սրան իսկ մյուսով՝ հացի կտորը զրպանը կոխել: Բայց հաղթվածը հուսահատությունից ուշժ առած գլխով մի հարու տվեց իր յեղբոր փորին ու նրան գետին գլորեց:

Սակայն հարկ կա՞ արդյոք նկարագրելու մի զգվելի մրցություն, փորն ափելի յերկար տեղեց, բան կարելի չեր սպասել, աչքի առաջ ունենալով նրանց մանկական ուշժերը:

«Կարկանդակը» ձեռքից ձեռք եր անցնում յեւրոպեյապետ մի զրպանից մյուսը տեղափոխվում, բայց, ավանդ, փոխելով յեւ իր չափը, այնպես փոր յերբ վերջապետ շնչասպառ, հոգնատանջ, արյունլիկ նրանք դադար առան, այլեւս մրցելու անգոր. նիշտն ասած, կռվի պատճառն եւ արդեն չքացել եր: Հացի կտորն անհետացել, փշուր-փշուր եր յեղել նման այն ափազին, փորին խառնվել եր:

Այդ տեսարանը պղտորեց ինձ համար պեղծածը յեւ մինչ այդ մարդուկներին հանդիպելս ինձ տիրող խաղաղ բերկրանքը ողբ ցնդեց:

Յեւ չես յերկար մնում եյի տխուր, շարունակ ինքս ինձ կրկնելով՝ «կա ուրեմն մի սքանչելի յերկիր, ուր հացը կաբկանդակ ե կոչվում, ուր նա մի այնքան հագվագլուտ կամակ ե, փոր առաջ ե բերում ի՞սկ փոր յեղբայրասպան կռիւ:

Չինացիք կատվի աչքերից են իմանում, թե փոր ժամն ե:

Մի որ մի միսխոնար Նանկինի շրջակայքում գրոտնելիս տեսաւ, փոր ժամացույցը մոռացել ե յեւ մի փորրիկ տղայի հարցրեց թե ժամը քանիսն ե:

Յերկնային պետության լաճը մի վայրկյան շփոթվեց բայց իսկունս սթափվելով պատասխանեց՝ «խակուն կասեմ ձեզ»: Ի՞նչ անց, նա յեկաւ մի անագին կատու զրկած յեւ, ինչպես պատմում են, նայեց այդ կատվի աչքերին՝ սպիտակուցքին ու վատահ ասաց. «կեսորից քիչ պակաս ե»: Յեւ իրոք այդպես դուրս եկաւ:

Իսկ յես, յերբ թեքվում եմ գեպի գեղանի Ֆելինը, փորպիսի սքանչելի անուն, փորն անտարակույս իր սնով փառքն ու իմ սրտի պարծանքն ե, իմ մոքի բույրը, միլիմետրն ե, լինի դա գիշերը թե ցերեկը, կատարյալ լույսի թե անթափանց խավարի մեջ, նրա սիրելի աչքերում յես պարզ տեսնում եմ ժամը՝ միշտ նույն լայնածախալ, հանդիսավոր, անհուն, փորպես տարածությունը, առանց բուրբուխների ու վայրկյանների բաժանման. մի անշարժ ժամ, փոր ժամացույցների վրա նշանակված չե, փորը միլիաժամանակ թեթեւ ե, փորպես հառաչ յեւ արագ, փորպես ակնարկ:

Յեւ յեթե անտանելի մեկը գա ինձ խոռվելու, յերբ հայացքս հանգչում ե այդ հմայիչ ժամացույցի վրա, յեթե անհամբերատար ու անտանելի մի վոզի, յեթե մի խանգարիչ Դեւ ասեր ինձ՝ «ի՞նչ ես նայում այդքան ուշադիր, ի՞նչ ես փորոնում դու այդ եյակի աչքերում, գուցե այնտեղ տեսնում ես դու, թե փոր ժամն ե,

անառակ ու պարապ մարդ», յես կառնասխանելի՝
«այո, յես տեսնում եմ ժամը՝ դա Հավիտենութունն ե»:

Այնպես չե՞, տիկին, ահա մի իսկ վոր արժանավոր
մադրիգալ, նույնքան ճոխ, վորքան յեվ դուք ինքներդ:
Ճիշտն ասած՝ յես այնպիսի մի բավականությամբ
հյուսեցի այս հավակնոտ հանոյաբանությունը, վոր
նրա լիտխարենն ձեզնից վոչինչ չպիտի խնդրեմ:

15 ԱՇԽԱՐՀԻ ԿԵՍԸ ՔՈ ՄԱՋԵՐՈՒՄ

Թույլ տուր ծծեմ, յերկա՛ր, յերկա՛ր ծծեմ մագերիդ
բույրը: Յերեսս նրանց մեջ ընկղմեմ, վորպես ծարա՛լն
և սուզում իր դեմքն աղբյուրի ջրի մեջ, յեվ ծածանեմ
նրանց ձեռքովս, վորպես հոտավետ մի թաշկինակ,
վոր թոթափեմ ողում իմ հուշերը:

Դու չգիտես, թե ինչե՛ր եմ տեսնում, ինչե՛ր եմ
զգում, ինչե՛ր եմ լսում քո մագերում: Իմ հոգին
ճանապարհորդում և բույրերի մեջ, վորպես ուրիշ-
ներինը՝ յերաժշտության մեջ:

Քո մագերում պահված և մի յերազ՝ լի կայմերով
ու առագաստներով, քո մագերում անծիր ծովեր կան,
ուր մուտւմ հողմերը տանում են ինձ դեպի բաղբ
յերկիրներ, ուր տարածությունն ավելի կապույտ և
յեվ ալիլի խոր, ուր մթնոլորտը մրգերի, ծաղիկների
յեվ մարդկային մորթի բույրով և լեցուն:

Քո մագերի ովկյանում մի նալահանգիստ եմ
տեսնում, ուր մեղամաղծիկ յերգեր են հնչում, ուր
խոնավում են քաջալանջ մարդիկ այլեւայլ աղգերից
յեվ այլեւայլ ձեվի նալեր են նկարվում յերկնի անչափ

տարածության մեջ իրենց մանրարվեստ գծերով, ուր
անմահական ջերմությունն և նազում:

Քո մագերի փայփայանքում յես վերապրում եմ
յերկար ժամերի նվաղումը բազկաթոռի վրա, գեղեցիկ
նալի սենյակներից մեկում, նալահանգստի ծփանքով
ծաղկամանների ու զովարար կուլաների մեջ:

Քո մագերի բոցավառ կրակում յես ափիյոնախառն
ու շաքարախառն ծխախոտի մի բույր եմ զգում:

Քո մագերի գիշերում յես տեսնում եմ, ինչպես
շողում և հասարակածային լազուրի անեզրությունը,
իսկ մագերիդ շուրջը փուլած աղվամազն արբեցնում և
ինձ, վորպես կոկոսի յուղի, խեժի յեվ մշկընկույզի
բուրմունքը:

Թույլ տուր կրծեմ անվերջ քո սեւ ու ծանր
հյուսերը: Յերբ յես կրծում եմ քո ելաստիք ու ան-
հնազանդ մագերը, թվում և ինձ, վոր յես իմ հուշերն
եմ ուտում:

16 ԶՔԱՎՈՐԻ ԽԱՂԱԼԻՔԸ

Յես ուզում եմ ձեզ մի անմեղ գլարճության
գաղափար ներշնչել:

Այնքան սակավ են անմեղ գլարճությունները:

Յերբ առափուտյան դուք դուրս եք գալիս թափա-
ռելու մոտադրությամբ, ձեր գրպանը գրոշանոց իրերով
լցրեք: Վերցրեք թեղի վրա պարող տափակ խեղկա-
տակներ, դարբիններ, վոր զնդանն են կռում, ծիլավոր
յեվ ձի, վորի պոչը միյնելույն ժամանակ սուլակ և,
յեվ զինետոների մոտ կամ ծառերի տակ հանդիպած
անծանոթ ու խեղճ մանուկներին՝ ընծայեցեք այդ

իրերը: Դուք կտեսնեք թե ինչպես անչափ կմեծանան նրանց աչքերը: Նախ՝ նրանք չեն համարձակվի վերցնել, նրանք չեն հավատա իրենց այդ յերջանկության, ապա՝ հապճեպ կխլեն ձեր նվերն ու կփախչին, փորպես կատուներն են փախչում, փոր հեռվում ուտեն ձեր տված պատառը, փորովհետեւ սովոր են կասկածանքով վերաբերվելու զեպի մարդը:

Ճանապարհի վրա մի մեծ այգու ցանկապատի հետեւը, ուր արեւի շողերով փողողված փայլում ե մի սպիտակ դռակ, սիրուն ու թարմերես մի մանուկ եր կանգնած ամրան սեթեւիկի հագուստով:

Շքեղ ու անհոգ, ճոխության սովոր կյանքն այդ մանուկներին այնքան ե սիրունացնում, փոր թվում ե, թե նրանք յեւ միջին ու աղքատ դասակարգի մանուկները բոլորովին տարբեր խմորից են շինված:

Մանկան մոտ կանաչների մեջ ընկած եր մի շքեղ խաղալիք, նույնքան թարմ, փորքան յեւ իր տերը, լաքած, փոսկեգոծ, ծիրանի հաշուստով, փնտուրներով յեւ ուլունքներով պննված: Բայց մանուկն անուշադիր եր թողել իր սիրելի խաղալիքը յեւ ահա թե ուր եր նայում:

Ցանկապատի մյուս կողմը, ճանապարհի վրա, յեղիծի ու փշերի մեջ մի ուրիշ մանուկ կար՝ կեղտոտ, մրտտ, փոխտ, մակն այն պարիլա-մանուկներից, փորոնց մեջ անաչառ հայացքը կգտնի գեղեցկութուն, յեթե միայն մոտք քերի նրա վրայից խեղճության զգվելի ժանգը՝ նման հմուտ արվեստագետին, փոր կոպիտ լաքի տակ գուշակում ե իդեալական մի նկար:

Յերկու աշխարհ՝ մեծ ճանապարհն ու դռակն իրարից զատող այդ սիմբոլիկ ցանկապատի արանքից

չքափոր մանուկը ցույց ե տալիս հարուստ մանկան իր սեփական խաղալիքը, փորն ազահորեն զննում եր հարուստ մանուկը, կարծես մի հագվազուտ ու ու յոեսնված բան լինելու դա:

Իսկ այդ խաղալիքը, փոր չքափոր մանուկը վեր ու վար եր զգում փանդակի մեջ, փորով նա հրապուրել եր հարուստ մանկան, փոչ այլ ինչ եր, բայց յեթե մի կենդանի մուկ:

Անշուշտ ծնողները խնայողության նկատումներով եյին խել կենդանի կյանքից այդ խաղալիքը:

Յեւ յերկու մանուկն ել մեկտեղ յեղբայրաբար ծիծաղում եյին յեւ նրանց ատամները հավասար սպիտակությամբ եյին փայլում:

17 ԻՐԻԿԱՆ ՄՅԵՇԱՂԸ

Յերեկը հանգչում ե: Մի մեծ անդորրություն ե իջնում որվա աշխատանքից խոնջացած խեղճ հոգիներում յեւ նրանց մոտորումները մթնշաղի քնքույշ ու անորոշ գույներով են ներկվում:

Բայց ահա յեռնածայրից իրիկվա թափանցիկ ամպերի միջով մի փոռնոց ե հասնում իմ պատշգամբին: Դա ճիւղերի աններդաշնակ մի ժխոր ե, փոր հեռավորության վրա սգանչյուն մի ներդաշնակության ձեւ ե ընդունվում, նմանելով ծովի մակընթացության կամ զարթնող փոթորկի աղմուկին:

Ո՞վ են այն անբախտները, փորոնց յերեկոն իսկ հանգիստ չի բերում, փորոնք բույրի նման իջնող յերեկոն ընդունում են իրենի շաբաշի ազդանշան:

Այդ չարաշուկ վոռնոցը սարի ծայրին թառած հիվանդանոցից ե գալիս:

Յեւ ամեն յերեկո, յերբ յես ծխում եմ ու հափշտակված դիտում անեզր ու խաղաղ դաշտավայրը, ուր անթիվ տնակներ են ցրված, վորոնց պատուհանները կարծես ասելիս լինեն՝ «ահա այստեղ ե ընտանեկան ուրախությունը», ալդ ժամին, յերբ հողմը փչե սարի կողմից, յես կարող եմ որորել խռով միտքս դժոխային ներդաշնակության նմանությամբ: Մի՞նշաղը զրգռում ե խենթերին:

Մտաբերում եմ իմ յերկու բարեկամին, վորոնց մի՞նշաղը կատարելապես հիվանդացնում եր: Դրանցից մեկն այդ պահին մտահան եր անում ամեն բարեկամական ու քաղաքավարական նկատում յեւ վայրենու պես հարձակվում եր առաջին յեկողի վրա: Տեսել եմ՝ ինչպես նա մետր-դոտելի յերեսովն ե տվել հրաշալի ճուտը, վորի մեջ նա ինչ վոր իրեն վիրավորող ծածկագիր եր տեսել: Յերեկոն, վոր խոր հեշտանքների կարապետն ե, թունավորում եր նրա համար ամեն հրապուրանք:

Մյուսը, վոր պատվասիրության հիվանդն եր, քանի յերեկոն մոտենում եր, այնքան ինքը մռայլ, թթու յեւ նեղսիրտ եր դառնում: Նա, վոր ցերեկն ընկերասեր եր յեւ քաղցրաբարո, յերեկոներին դառնում եր անողորմ ու անկարեկիր: Յեւ միշտն ուրիշների վրա չեր, վոր թափում եր իր մի՞նշաղային ցասումի մանիյան, այլ յեւ իրա:

Սրանցից առաջինը մեռավ խելագար դրության մեջ առանց իր կնոջն ու զավակին ճանաչելու, իսկ յերկրորդն իր մեջ մշտական հիվանդության արհաւիրքն եր կրում յեւ յեթե պարգեւելին նրան բոլոր

պատվանշաններն ու աստիճանները, վոր կարող են տալ իշխաններն ու հանրապետությունները, ինձ թվում ե, իրիկվա մի՞նշաղը դարձյալ պիտի վառեր նրա մեջ յերեւակայական պատվանշանների տենչը: Գիշերը, վոր խափար ե լցնում նրանց հոգու մեջ, իմում լույսեր ե վառում, յեւ թեպետ սակավ չի պատահում, վոր միջնախոյն պատճառը յերկու տարբեր հետեւյանք ծնի, սակայն դա ինձ շփոթի ու տագնապի մեջ ե գցում միշտ:

Ո՛, գիշեր, ո՛. զովարար մութ, դուք ինձ համար մի ներքին տոնի ազդանշան եք, դուք ազատում եք ինձ սրտամաշ տաղտկությունից: Դաշտերի ամայության մեջ յեւ մայրաքաղաքի բարե լաբիրինթում, աստղերի ցուլերն յեւ լապտերների բոցեր, դուք ազատութեան դիցունհու կախարդական կրակներն եք ինձ համար:

Վորքան անճշ ես, մի՞նշաղ, վորքան քնքույշ: Վարդագույն ցուլեր, վոր դողում են հորիզոնի վրա, վորպես ցերեկի հոգեվարքը՝ հաղթընթաց գիշերի դեմ, աշտարակի վրա յերեւիող կրակներ, անթափանց կարմիր բծեր, մայրմուտի վերջին փայլեր, ծանրածալ վարագույրներ, վոր անտես մի ձեռք բարձրացնում ե արեւելքի խորքից՝ յեւ այդ բոլորը նման ե այն զգացումներին, վորոնք վառվում են մարդու սրտում կյանքի հանդիսավոր ժամերին:

Կարծես կաքալիւհիների այն արտասովոր զգեստն ե դա, ուր թափանցիկ բոդի տակից յերեւում ե շողուն շրջագգեստի մեղմած փայլանքը, ինչպես ներկա գիշերի միջից քաղցր անցյալն ե ժպտում յեւ ցանուցիր, արծաթյա յեւ վոսկեղեն աստղերը ներկայացնում են յերեւակայության այն հուրերը, վորոնք միշտն խորին գիշերի սգահանդերծի մեջ են վառվում:

Մի մարդասեր լրագրացիր ասում է ինձ, վոր մենությունը փաստակար ե մարդուն յեվ իր ասածն ապացուցանելու համար, ինչպես բոլոր անհավատներն են անում, նա յեվս յեկեղեցական հայրերի խոսքերն ե ցիտում:

Յես գիտեմ, վոր Դևիլն ամայի տեղերն ե սիրում յեվ վոր սպանության ու վավաշոտության Վոզին սքանչելի կերպով մենության մեջ ե բորբոքվում: Դուցե մենությունն իրոր փտանգավոր ե դանդաղկոտ հոգիների համար, վորոնք առանձնությունն իրենց կրքերով ու ցնորքներով են լցնում:

Անշուշտ մի շատախոս, վորի համար չկա ավելի բարձր վայելք, քան ամբիոյնի կամ բեմի բարձրից խոսելը, կատաղի խելագարության փտանգին պիտի յենթարկվեր, յեթե հանկարծ Ռոբինզոնի կղզին ընկներ: Յես իմ լրագրացրից Կրուզոյի առաքինությունն չեմ պահանջում, բայց պահանջում եմ, վոր նա մեղադրանքներ չբարդի մենության յեվ խորհրդավորի սիրահարների վրա:

Մեր շատախոս ցեղի մեջ կան անհատներ, վորոնք առանց դիմադրելու կրնդունելին մահապատժի չարչարանքը, յեթե միայն թույլ տային, վոր եշափոթի բարձրությունից մի ճոռոմ ատենախոսություն արտասանեն առանց յերկնչելու, վոր Սանթեռի թմբուկներն անժամանակ պիտի ընդհատեն իրենց նարտարարանությունը:

Դրանց յես չեմ խղճում, վորովհետեւ կարծում եմ, վոր հոռոտությունը նրանց նույնքան հաճելի յե,

վորքան ուրիշներին լուությունն ու մտամփոփությունը բայց յես արհամարհում եմ նրանց:

Յեվ ամենից առաջ յես կուզիլ, վոր անիծված լրագրացիրը թույլ տար ինձ զփարճանալ այնպես, ինչպես յես եմ ցանկանում:

— Մի՞թե դուք յերբեք կարիք չեք զգում, ասում ե ինձ նա ոնգածայն յեվ առաքյալի ձեւով, մեկին հաղորդակից դարձնելու ձեր խնդրության:

Տեսե՛ք դուք այդ խորամանկ նախանձոտին: Նա գիտե, վոր յես արհամարհում եմ իր խնդումները յեվ ահա իմիներն մեջ ե ուզում խոթվել, վոր խանգարի:

«Մեծ դժբախտությունն ե չկարողանալ մենակ լինել», ասել ե մի տեղ Լաբրյույերը, կարծես ցանկանալով ամաչեցնել բոլոր նրանց, ու զեպի ամբոխն ե վազում ինքնամոռացում վորոնելու, հարկաւ յերկնչելով, վոր յեթե մանակ մնա, ինքն իրեն չպիտի կարողանա տանել:

«Գրեթե մեր բոլոր դժբախտությունները ծագում են նրանից, վոր մենք չենք կարողանում մեր սենյակում մնալ», ասում ե մի ուրիշ իմաստուն, կարծեմ Պասկալը, կոչելով դեպի մտամփոփության խուցը բոլոր այն խենթերին, վորոնք յերջանկություն են փնտռում խլրտումի յեվ պոռնկության մեջ, վոր յես յեղբարեկամութեամբ կանխանելի, յեթե կամենալի մեր դարի սքանչելի լեզվով խոսել:

Նա զբոսնում եր մեծ ու ամայի պուրակում յեվ ասում ինքն իրեն՝ վորքան չքնաղ պիտի լիներ նա արքունի ճոխ ու մանվածո զգեստով, յերբ խաղաղ

յերեկոյին պալատի մարմար աստիճաններով ցած իջնելիս իննը դեպի դիմացի մարմանդն ու շատորվանը։ Վորովհետեւ նա կարծես պրինցուհի յե ծնված։

Քիչ անց փողոցում նա կանգ առավ զրափյուրների խանութի առաջ յեւ դիտելով թղթապանակի մեջ ցուցադրված տրոպիկ պեյզաժի մի եստամպաժ, ամաց ինքն իրեն՝ «վոչ, պալատում չե, փոր յես կուզեյի տիրանալ նրա սիրելի կյանքին։ Այնտեղ մենք մեր տանը չենք ինն յեւ պատերի փոսկեզոծ կերտվածները նրա պատկերի համար ցայտուն փայլելու տեղ պիտի չթողնեյին յեւ այն շքեղ սրահներում չպիտի լիներ մի անկյուն մտերմական առանձնության համար։

Ահա թե փորն ե այն վայրը, ուր պիտի բնակվիս յես կյանքիս ցնորքը փայփայելու համար»։

Յեւ զննելով զրափյուրի մանրամասները, նա մտքում շարունակեց՝ «ծովափին մի սիրուն փայտե տնակ, շրջապատված այս տարրերինակ ու փայլուն ծառերով, փորոնց անունները յես մոռացել եմ... Ողում արբեցնող, անասելի մի բուրմունք... Տնակում վարդի ու մուշկի ուժեղ բույր... Քիչ հեռու մեր փողքիկ կալվածի հետեւը՝ կայմեր, փորոնց կատարները դողում են ծփանքից։

Մեր տնակի շուրջը վարազույրները լույս են դուրս մաղում սենյակից, փորը վարդագույն կրակով ե լուսավորված յեւ զարդարված ե թարմ խտիրներով, արբեցնող ծաղիկներով, ծանր ու սեւ փայտից շինված սակավաթիվ պորտուգալյան ուկոկո փոճի աթոռներով, փորոնց վրա նա այնքան խաղաղ պիտի հանգստանա, անուշ հովահարված, ծխելով թեթեւակի ափիլոնած ծխախոտ... իսկ դուրսը, տնակի շուրջը

լույսով արբած թռչունների ծլվոց յեւ փոքրիկ նեզրուհիների քչից... Յեւ գիշերն իբր ձայնակցութուն իմ յերազներին՝ յերաժտական մեղամաղձիկ ֆիլառ ծառերի ցավազին յերգ... Այո՛, ահա այն վայրը, փոր յես փորոնում եյի։ Յեւ ինչիս ե պետք պալատը»։

Բայց քիչ հետո, լայն ծառուղիով անցնելիս՝ նա մի մաքուր հյուրանոց տեսավ, փորի խայտաբղետ չիթ վարագույրներով զարդարված պատահանից ցած եյին նայում յերկու ծիծաղկոտ դեմքեր։ «Վորպիսի շրջմոլին ե միտքս, — ասաց նա ինքն իրեն — յեթե նա հեռունեն ե գնում փորոնելու այն, ինչ այստեղ, իմ կողքին ե։ Խնդումն ու յերջանկությունը գտնվում են պատահածդ առաջին պանդուկում, պատահական իջեվանում, փոր այնքան բեզուն ե զվարճությամբ։ Բոցավառ կրակ, պայծառ ֆայանս, տանելի ընթրիք, թունդ գինի յեւ լայն, արծակ անկողին մի քիչ կոշտ, բայց թարմ չարսավով՝ սրանից ել լավ բան»։

Յեւ վերադառնալով տուն այն ժամին, յերբ դրսի կյանքի բրզզոցը չի խլացնում իմաստության խորհուրդը, նա ասաց ինքն իրեն՝ «ցնորքով յեղա յես այսոր յերեք տան մեջ յեւ բոլորն ել հավասար չափով հաճելի յեյին ինձ։ Ուրեմն ինչ կարիք նեղել մարմինը տեղափոխության համար, յերբ հոգիս ճանապարհորդում ե այսպիսի թեթեւությամբ։ Յեւ ինչ կարիք իրականացնել ծրագիրները, յերբ ինքը ծրագրումն այնքան բերկրալից ե»։

Ահ, դուք ուզում եք իմանալ, թե ինչու յեմ այսօր ձեզ այսպես ասում:

Անտարակույս ինձ համար ավելի հեշտ պիտի լինի այդ բացատրելը, քան ձեզ համար նույնը հասկանալը, փորձենա՞նք իմ կարծիքով դուք կանացի անթափանցողութեան մի փայլուն նմուշ եք ներկայացնում:

Ահա խոսք ելինք տվել, փոր մի միտք ու մի հոգի լինենք այսուհետեւ, մի հասարակ ցնորք, փորը փայլալուծ են բոլոր մարդիկ յեմ փորը սակայն դեռ վոչ վոքի համար իրականութիւն չի դարձել:

